Վնաս գնահատողին վարձատրում է նրա հետ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը: Միջազգային փորձի համաձայն՝ վնաս գնահատողը պետք է տիրապետի ոչ միայն ապահովագրական, այլև՝ ագրոնոմիական գիտելիքների: Սերտիֆիկացված վնաս գնահատողների հետ հանդիպումների արդյունքում պարզվել է, որ նրանք ագրոնոմիական գիտելիքների չեն տիրապետում, ընդ որում՝ մեծ մասն աշխատում է այլ բնագավառներում: Բացի այդ՝ քանի որ այս ոլորտում վարձատրությունը ցածր է, նրանք նախընտրում են պահպանել իրենց հիմնական աշխատանքը:


Արդյունքները և վերլուծությունը

Հարկ է նշել, որ արդեն հայտնի են Հայաստանում գյուղատնտեսության ապահովագրության առաջին տարվա ցուցանիշները: Քանի որ ընդհանուր վերլուծություն և որոշակի եզրակացություններ կատարելու համար անհրաժեշտ են երկարաժամկետ տվյալներ, ուստի հակված ենք հետազայում ևս շարունակել այս ուղղությամբ ուսումնասիրությունները:

Գծապատկերում ներկայացված են գյուղատնտեսության ապահովագրության գծով հավաքագրված ապահովագրավճարները և կատարված հատուցումները 2020 թ. ընթացքում:

Ուսումնասիրությունների համաձայն՝ 2020 թ. կնքվել է 1546 ապահովագրական պայմանագիր, որոնց հաշվեգրված ընդհանուր ապահովագրավճարը կազմել է մոտ 130,5 մլն դրամ, սուբսիդավորված գումարը՝ 69,0 մլն դրամ: Կնքված պայմանագրերի արդյունքում ապահովագրված այգիների տարածքը կազմել է մոտ 2500 հա, այդ թվում՝ Արմավիրի մարզում՝ 824,4 հա, Վայոց ձորի մարզում՝ 10,3 հա: Ապահովագրված ցանքատարածությունների մեծ մասը զբաղեցրել է հացահատիկը (1329,7 հա), իսկ դեղձի այգիները զբաղեցրել են փոքր տարածք (24,8 հա): Ծրագրի շրջանակում գյուղատնտեսությունում պատահարների հետևանքները մեղմելու նպատակով ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրվել է 300 ապահովագրական հատուցում (151,3 մլն դրամ): Ապահովագրական հատուցումների գերակշիռ մասը տրամադրվել է Արմավիրի մարզին՝ 47,3 մլն դրամ, իսկ փոքր մասը՝ Տավուշի մարզին՝ 0,4 մլն դրամ (Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր, 2020, 2021):

Ապահովագրության արդյունավետությունը բնութագրող կարևոր ցուցանիշներից է վնասաբերության մակարդակը, որը գանձված ապահովագրավճարների և կատարված հատուցումների հարաբերակցությունն է՝ արտահայտված տոկոսներով: Ըստ հաշվարկների՝ գյուղատնտեսության ապահովագրության վնասաբերության մակարդակը 2020 թ. կազմել է մոտ 116 %, ինչը մտահոգիչ է: Պատճառն այն է, որ գյուղատնտեսության ապահովագրության պայմանագրեր կնքած ապահովագրական (Ինգո Արմենիա, Ռոսգոսստրախ Արմենիա, Սիլ Ինշուրանս) և վերաապահովագրական (Swiss Re) ընկերությունները մասնավոր առևտրային կազմակերպություններ են, որոնց գործունեության հիմնական նպատակը շահույթ ստանալն է:



Գծ. Գյուղատնտեսության ապահովագրության գծով հավաքագրված վճարները և կատարված հատուցումները, ՀՀ դրամ (կազմվել է հեղինակների կողմից՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության հրապարակած տվյալների հիման վրա):

Հետևաբար, եթե հաջորդ մեկ կամ երկու տարիների ընթացքում վնասաբերության ցուցանիշը կրկին բարձր լինի, այդ կազմակերպությունները կարող են պարզապես դադարեցնել գյուղատնտեսության ապահովագրության պայմանագրերի կնքումը, և ծրագիրը շարունակական չի լինի: Ուստի ինչպես 2016 թվականին, ներկայումս էլ առաջարկում ենք, որ գյուղատնտեսության ապահովագրությամբ զբաղվեն ոչ թե մասնավոր, այլ պետական ապահովագրական ընկերությունները (Գ. Ոսկանյան, 2015): Կարծում ենք, որ բացասական զարգացումներից խուսափելու համար անհրաժեշտ է կատարել գյուղատնտեսության ապահովագրության արդյունավետության բարձրացմանը նպաստող կշռադատված քայլեր:

Եզրակացություն

ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացումը պայմանավորված է ոչ միայն ոլորտում ապահովագրական համակարգի զուտ ներդրմամբ, այլև այդ գործընթացի մշտադիտարկումով, արդյունավետության գնահատմամբ, թերացումների վերհանմամբ, խնդիրների բացահայտմամբ և ժամանակին լուծմամբ:

Ուսումնասիրությունների համաձայն՝ տնտեսական և սոցիալական նշանակության տեսանկյունից ապահովագրական համակարգի ներդրումը նպաստում է գյուղացիական տնտեսությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը (միջնաժամկետում և երկարաժամկետում), միաժամանակ դրական ազդեցություն է գործում նաև գյուղական բնակչության կյանքում: Ուստի կարծում ենք, որ անհրաժեշտ է մոտիվացնել Հայաստանում գրանցված ապահովագրական ընկերություններին, որպեսզի գործունեություն ծավալեն գյուղական համայնքներում և ընդլայնեն համագործակցությունը հատկապես գյուղատնտեսության բնագավառում:

Գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում տարիների ընթացքում մեր կատարած ուսումնասիրությունները, ինչպես նաև Հայաստանում այդ ոլորտի արդի վիճակի վերլուծությունը հիմք են տալիս կատարել առաջարկություններ: Նպատակահարմար է, որ գյուղատնտեսության ապահովագրության համակարգում ներգրավված բոլոր կառույցները (ապահովագրական ընկերություններ, ԳԱԱԳ, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն և այլն) ունենան այնպիսի մասնագետներ, որոնք կհամապատասխանեն որոշակի չափորոշիչների (բազային կրթություն, գիտական գործունեություն, գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում աշխատանքային փորձ, որակավորում և այլն) և տարբեր իրավիճակներում կկարողանան կայացնել արդյունավետ որոշումներ:

Գյուղական համայնքներում «ապահովագրական մշակույթի» ձևավորման նպատակով անհրաժեշտ է պատ-

րաստել գովազդային հոլովակներ, որոնց ծախսերը պետք է հոգան ապահովագրական ընկերությունները, ՀՀ կառավարությունը և ԳԱԱԳ-ն: Բացի այդ՝ պետք է մշակել տեղեկատվական թերթիկներ, որոնք սեմինարների ավարտից հետո կտրամադրվեն ֆերմերներին: Ընդ որում՝ սեմինարները պետք է կրեն ոչ միայն տեղեկատվական բնույթ, այլև մանրամասն ներկայացնեն ապահովագրության, մասնավորապես գյուղատնտեսության ապահովագրության առանձնահատկությունները (չապահովագրվող ռիսկեր, չհատուցվող գումար, ապահովագրական ծածկույթ և այլն):

Մինչև ապահովագրության պայմանագիր կնքելն ապահովագրական ընկերության ներկայացուցիչը պարտադիր պետք է այցելի այն տարածքը, որտեղ մշակվում է ապահովագրման ենթակա մշակաբույսը: Առաջին հերթին նա պետք է պարզի՝ արդյոք ֆերմերը պահանջել է ագրոտեխնիկական բոլոր պահանջները և բացահայտի այն ռիսկերը, որոնք սպառնում են բերքի կորստին:

Կարևոր է, որ վնաս գնահատողները տիրապետեն ագրոնոմիական, ապահովագրական և գյուղատնտեսության ապահովագրության գիտելիքների: Նրանց աշխատավարձը պետք է լինի մրցունակ և տրամադրվի ոչ միայն ապահովագրողների, այլև պետության կողմից: Այս առաջարկությունը հետապնդում է երկու հիմնական նպատակ.

- հնարավորություն տալ, որ վնաս գնահատողները ներկայացնեն ոչ միայն ապահովագրական ընկերությունների շահերը (գոյություն ունի մի պարզ ճշմարտություն՝ «Ով վճարում է, նրա շահերն էլ պաշտպանվում են»), այլև իսկապես լինեն որոշակիորեն անկախ,
- նվազեցնել վնաս գնահատողների վարձատրության ծախսերը և նպաստել, որ մասնավոր ապահովագրողներն ավելի շահագրգռված լինեն զբաղվել գյուղատնտեսության ապահովագրությամբ:

ԳԱԱԳ-ն պետք է ակտիվացնի գործունեությունը՝ վերահսկողության իրականացումը, տեղեկատվության տարածումը, ինչպես նաև գյուղատնտեսության ապահովագրության վերաբերյալ տվյալների բազայի ստեղծման և իր ինտերնետային կայքում հրապարակման միջոցով բարձրացնի աշխատանքի արդյունավետությունը:

Քանի որ գյուղատնտեսության ապահովագրության գծով ապահովագրավճարները սուբսիդավորվում են պետության կողմից, ՀՀ կառավարությունը, ի դեմս Էկոնոմիկայի նախարարության, պետք է հետևողական վերահսկողական գործառնություններ իրականացնի գյուղատնտեսության ապահովագրության գործընթացում ներգրավված բոլոր օղակների նկատմամբ:

Անհրաժեշտ է աստիճանաբար նվազեցնել նաև գյուղատնտեսության ապահովագրությունում վերաապա-

հովագրողի մասնաբաժինը (90 %-ից ցածր), քանի որ վերապահովագրության միջոցով բավական մեծ գումարներ են դուրս գալիս երկրից, ինչը հանգեցնում է որոշակի բացասական հետևանքների: Միևնույն ժամանակ մասնավոր ապահովագրողների գործունեությունը չվտանգելու համար պետությունը կարող է ստանձնել վերապահովագրողի գործառույթի մի մասը, ինչն ընդունված է շատ երկրներում:

Գրականություն

1. Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագիր, 2019. - Էջ 8-11:
2. Գյուղատնտեսությունը Ապահովագրողների Ազգային Գործակալության պաշտոնական կայք, <https://aina.am/gyux-apahovagrutun/> (դիտվել է՝ 25.05.2021 թ.):
3. Ոսկանյան Գ. ՀՀ գյուղատնտեսության մեջ ապահովագրական համակարգի ներդրման քաղաքականությունը // Ագրոգիտություն. - N 3-4. - 2015. - Էջ 87-91:
4. Տարեկան հաշվետվություն: Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր 2020. - Եր., 2021. - Էջ 24-25:
5. Զոհարյան Լ. Գյուղատնտեսության ապահովագրության համակարգի կատարելագործման ուղիները ՀՀ-ում: Ատենախոսության սեղմագիր. - Եր., 2020. - Էջ 8, https://www.bok.am/sites/default/files/2020-06/014_Levon-Kocharyan.pdf (դիտվել է՝ 25.05.2021 թ.):
6. Agricultural Insurance. A Powerful Tool for Governments and Farmers, - 2008, - p. 24.
7. Roberts, R.A.J. (2005). Insurance of Crops in Developing Countries, Food and Agriculture Organization of the United Nations, Rome, - p. 1.
8. Using Digital Tools to Expand Access to Agricultural Insurance, - 2018, - pp. 7-10.

Современное состояние сельскохозяйственного страхования в Армении и пути решения насущных задач

А.Е. Восканян, Г.В. Восканян

Национальный аграрный университет Армении

Ключевые слова: сельское хозяйство, риск, управление рисками, страхование, субсидии

Аннотация. В статье представлено текущее состояние сельскохозяйственного страхования при содействии государства РА, выявлены существующие проблемы и пути их решений. На основе анализа зарегистрированных показателей агрострахования был рассчитан уровень убыточности и дана четкая оценка.

При реализации представленных предложений возможно избежать отклонения от закономерного развития агрострахования при содействии государства в Армении и обеспечить гарантированное продолжение осуществляемой программы.

The Current State of Agricultural Insurance in Armenia and Ways of Solving the Urgent Problems

A.E. Voskanyan, G.V. Voskanyan

Armenian National Agrarian University

Keywords: agriculture, risk, risk management, insurance, subsidies

Abstract. The article considers the current situation of state-funded agricultural insurance in Armenia, some pressing issues and ways of their solution. Based on the analysis of the indices recorded in the sector of agricultural insurance the loss rate has been estimated and clear evaluation has been conducted.

Upon the accomplishment of the introduced recommendations it would be possible to avoid the regular development deviations in the sector of state-funded agricultural insurance in Armenia and to ensure secure continuity of the implemented program.

Ընդունվել է՝ 16.06.2021 թ.
Գրախոսվել է՝ 21.06.2021 թ.



ՀՏԴ 635.25/26:632

ԳԼՈՒԽ ՍՈՒՑԻ ՊԱՅՊԱՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՎԵԼ ՏԱՐԱԾՎԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Գ.Վ. Ավագյան գ.գ.թ.

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

gayaneavagyan@yahoo.com

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝

գլուխ սոխ,
պահպանում,
մոխրագույն փտում,
ասպերգիլիոզ,
բակտերիալ թաց փտում

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հետազոտությունների ընթացքում բացահայտվել է գլուխ սոխի ֆիտոպաթոգեն ութ միկրոօրգանիզմ:

Խաթունարիսի տեղական սորտի սոխը պահպանման ընթացքում հիմնականում վարակվում է բակտերիալ թաց, հազվադեպ՝ մոխրագույն և սև փտումներով (ընդհանուր վարակվածությունը՝ 18,4 %), իսկ ռուսական Կարատալսկի սորտի սոխը՝ առավելապես սև, հազվադեպ՝ բակտերիալ թաց և մոխրագույն փտումներով (ընդհանուր վարակվածությունը՝ 28,5 %):

Ի տարբերություն Խաթունարիսի տեղական սորտի սոխուկների՝ ռուսական Կարատալսկի սորտի պահպանման ընթացքում բակտերիալ թաց փտումով և ասպերգիլիոզով վարակված սոխուկները ծլում են ժամանակից շուտ:

Նախաբան

Գլուխ սոխը (*Allium cepa* L.) առավել տարածված, արժեքավոր և հնագույն բանջարաբուսության մշակաբույսերից է: Այն մշակվում է կլիմայական բոլոր գոտիներում: Պարունակում է ջուր, կարբոհիդրատներ (այդ թվում՝ շաքարներ, բջջանյութ), սպիտակուցներ, ֆոլատներ, աննշան քանակությամբ ճարպեր, վիտամիններ՝ C, B₁, B₂, B₃, B₅, B₆, B₉, հանքային նյութեր՝ Ca, Fe, Mg, Mn, P, K, Zn, որոնց սննդային արժեքը 100 գրամում կազմում է 40 կկալ (worddisk.com/wiki/Onion/), ինչպես նաև մանրէասպան հատկություն ունեցող ֆիտոնցիդներ:

Սոխն օգտագործվում է կերակուրներ պատրաստելիս (թարմ և մշակված վիճակում), բժշկության բնագավառում: Ընդ որում՝ չոր թեփուկները կիրառվում են կոսմետոլոգիայում, ինչպես նաև որպես գունանյութ:

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության տվյալների համաձայն՝ աշխարհում գլուխ սոխ արտադրող առաջատար երկրներում՝ Չինաստանում, Ջնդկաստանում, ԱՄՆ-ում, Եգիպտոսում, Իրանում, Պակիստանում, Թուրքիայում, Բանգլադեշում, Ռուսաստանում և Մեքսիկայում, տարեկան արտադրվում է 64,3 մլն տոննա սոխ (www.fao.org):

Հարկ է նշել, որ Հայաստանում սոխի համախառն արտադրանքը չի բավարարում ներքին պահանջարկը:

Ինչպես վեգետացիայի, այնպես էլ պահպանման ընթացքում գլուխ սոխը վարակվում է տարբեր հիվանդություններով: Ընդ որում՝ պահպանելիս, տարբեր պատճառներով (պահպանման պայմանների խախտում, վնասակար օրգանիզմների զարգացում) պայմանավորված, գլուխ սոխի կորուստները պահեստում կազմում են 9-28 % (Ջ.Ջ. Կապուտով, 1994), իսկ

խիստ վնասակար հիվանդություններով (ասպերգիլիոզ, մոխրագույն և բակտերիալ թաց փտումներ) վարակվածության արդյունքում՝ 18,7 % (Շ.Յ. Աваզով, 2018):

Նյութը և մեթոդները

Հետազոտությունների նպատակն է ուսումնասիրել ձմեռային պահպանման ընթացքում գլուխ սոխի հիվանդությունները և որոշել դրանց վնասակարության աստիճանը:

Հետազոտություններն իրականացվել են 2018-2020 թվականներին: Արարատի մարզի Ոսկետափ համայնքի պահեստում՝ օդափոխության բացակայության, չկարգավորվող ջերմաստիճանի և օդի հարաբերական խոնավության պայմաններում գլուխ սոխի հիվանդությունների տեսակային կազմը որոշելու համար ընտրվել են դեղնաշագանակագույն (ռուսական՝ Կարատալսկի) և կարմիր (տեղական՝ Խաթունարխի) թեփուկներով սորտերը: Սոխը պահեստ է տեղափոխվել առանց նախապես չորացման: 25-30 կգ պլաստիկ կարմիր պարկերը պահվել են կույտերով (պահպանման ժամկետը՝ նոյեմբեր-մարտ):

Շուկայից գնվել են դեղնաշագանակագույն, կարմիր թեփուկներով գլուխ սոխի խմբաքանակներ և ստվերում չորացնելուց հետո 10-15 կգ տարողությամբ պոլիպրոպիլենային սպիտակ պարկերով նույնպես պահվել չկարգավորվող օդաջերմային ռեժիմի պայմաններում (պահպանման ժամկետը՝ նոյեմբեր-մարտ): Սոխը ստուգվել է ամսական երկու անգամ: Հիվանդության ախտանիշներով սոխուկների նմուշները հետազոտվել են ՀԱՀՀ այգեպտղաբուծության և բույսերի պաշտպանության ամբիոնի, ինչպես նաև Պեստիցիդների սինթեզի և փորձաքննության հետազոտական կենտրոնի լաբորատորիաներում: Սոխի

վարակվածությունը տարբեր փտումներով հաշվարկվել է ֆիտոպաթոլոգիայում ընդունված մեթոդներով (Մ.Ի. Դեմենտևա, 1985, Ա.Կ. Կուլաչով և Դր., 1974):

Արդյունքները և վերլուծությունը

Ըստ հետազոտությունների՝ 2018-2020 թթ. ձմեռային պահպանման ընթացքում հայտնաբերվել և նույնականացվել է տարբեր գույնի թեփուկներով գլուխ սոխի ֆիտոպաթոգեն ութ միկրոօրգանիզմ՝ մեկ բակտերիալ, յոթ սնկային.

- բակտերիալ թաց փտում՝ *Pectobacterium carotovorum* subsp. *carotovorum* (Jones, 1901) Hauben et al. (*Erwinia carotovora* subsp. *carotovora* (Jones) Bergey et al.) (en.wikipedia.org/wiki/),
- ֆուզարիոգային հիմքային փտում՝ *Fusarium oxysporum* Schltd. f. sp. *cepae* W.C. Snyder et. H.N. Yansen,
- ասպերգիլիոզ կամ սև փտում՝ *Aspergillus niger* van Tieghem.,
- վզիկային մոխրագույն փտում՝ *Botrytis allii* Munn.,
- մոխրագույն փտում՝ *Botrytis cinerea* Pers.,
- երկնագույն փտում կամ պենիցիլիոզ՝ *Penicillium* Link. (*Penicillium chrysogenum* Thom. u *P. expansum* Link.),
- ալտերնարիոզ՝ *Alternaria alternata* (Fr.) Keissl.,
- կլադոսպորիոզ՝ *Cladosporium herbarum* (Pers.) Link. (www.mycobank.org/):

Նշված ֆիտոպաթոգեն օրգանիզմներից հիմնականում հայտնաբերվել են բակտերիալ թաց, սև, վզիկային մոխրագույն և հիմքային փտումները (նկ. 1-4):



Նկ. 1. Բակտերիալ թաց փտումով վարակված սոխուկ, սոխուկի կտրվածք:



Նկ. 2. Ասպերգիլիոզով վարակված սոխուկներ, վարակված սոխուկի կտրվածք:



Նկ. 3. Երկնագույն փտումով վարակված սոխուկներ (www.forestryimages.org):



Նկ. 4. Ֆուզարիոզային հիմքային փտումով վարակված սոխուկ:

Հետազոտությունների արդյունքների համաձայն՝ Խաթունարիսի տեղական սորտի սոխը պահպանման ընթացքում հիմնականում վարակվում է բակտերիալ թաց, հազվադեպ՝ մոխրագույն և սև փտումներով (վարակվածությունը՝ համապատասխանաբար 11,3, 4,5, 2,6 %), իսկ ռուսական Կարատալսկի սորտի սոխը՝ առավելապես սև, հազվադեպ՝ բակտերիալ թաց և մոխրագույն փտումներով (վարակվածությունը՝ համապատասխանաբար 13,5, 9,7, 4,9 %): Ըստ 2018-2020 թթ. միջին տվյալների՝ Խաթունարիսի տեղական սորտի սոխի ընդհանուր վարակվածությունը տարբեր փտումներով կազմել է 21,6, իսկ Կարատալսկի սորտի սոխինը՝ 28,5 % (աղ. 1):

Հետազոտությունների ընթացքում գրանցվել է նաև Կարատալսկի սորտի միևնույն սոխուկի վարակվածություն ասպերգիլիոզով և հիմքային, բակտերիալ

թաց փտումներով (Նկ. 5, 6): Բացի այդ՝ ստվերում չորացված սոխի համեմատությամբ պահեստում առանց չորացման պահպանվող ռուսական սոխի խմբաքանակում հայտնաբերվել է նաև ասպերգիլիոզով և մոխրագույն փտումով առավել բարձր վարակվածություն: Հարկ է նշել, որ սոխուկների պահպանման ընթացքում գրանցվող հիվանդությունների զարգացումը հիմնականում պայմանավորված է վեգետացիայի շրջանում սոխի մշակության տեխնոլոգիայով, բերքահավաքի, պահպանման պայմաններով և այլ գործոններով:

Դեղնաշագանակագույն թեփուկներով Կարատալսկի սորտի պահպանման ընթացքում, ի տարբերություն մոխրագույն և ֆուզարիոզային հիմքային փտումներով վարակված սոխուկների, բակտերիալ թաց փտումով, ասպերգիլիոզով վարակված սոխուկները ծել են ժամանակից շուտ:

Աղյուսակ 1. Գլուխ սոխի հիմնական հիվանդությունները պահպանման ընթացքում (2018-2020 թթ. միջին տվյալներ)*

Գլուխ սոխի սորտեր	Սոխուկների վարակվածությունը (P) տարբեր փտումներով, %				
	բակտերիալ թաց փտում	սև փտում	մոխրագույն փտում	հիմքային փտում	ընդամենը
Խաթունարիսի (տեղական)	11,3	2,6	4,5	-	18,4
Կարատալսկի (ռուսական)	9,7	13,5	4,9	0,4	28,5

*Կազմվել է հեղինակի կողմից:

Աղյուսակ 2. Պահպանման ժամանակ գլուխ սոխի առավել տարածված հիվանդությունների հարուցիչների համեմատական վերլուծությունը*

Հիվանդություններ	Տեր-բույսեր	Պահպանման վայրը	Վարակի շրջանը և վարակվող սոխուկները	Հիվանդության ախտանիշները	Նպաստավոր պայմանները
Վզիկային մոխրագույն փտում (<i>Botrytis allii</i>)	Սոխ, սխտոր, սոխ պորեյ և սոխ շալոտ	Հող, բուսական մնացորդներ	Սոխուկները վարակվում են վեգետացիայի ավարտին՝ բերքահավաքից առաջ: Հիվանդությունն արտահայտվում է պահեստում՝ պահեստավորումից մոտ մեկ ամիս անց: Հավանական է նաև մի սոխուկից մյուսին վարակի փոխանցումը: Հատկապես վարակվում են մեխանիկական վնասվածքներով կամ միջատների կողմից վնասված, գերխոնավ, գերհասունացած սոխուկները:	Արտահայտվում է սոխուկների վզիկային մասում՝ մոխրագույն բծերի տեսքով, որոնց վրա խոնավ պայմաններում առաջանում է մոխրագույն փառ: Յուսվածքները փափկում են, գորշանում: Վարակված սոխուկները 1-2 ամսից ամբողջովին փտում են: Հետագայում վզիկային մասում առաջանում են սև սկլերոցիումներ:	Օպտիմալ են +15...+20 °C ջերմաստիճանը և օդի հարաբերական բարձր խոնավությունը: Կարող է զարգանալ նաև +3...+4 °C պայմաններում:
Սոխի ֆուզարիոզային հիմքային փտում (<i>Fusarium oxysporum f. sp. cepae</i>)	Սոխ	Հող, բուսական մնացորդներ, սերմեր	Կարող է զարգանալ սոխի աճի և զարգացման տարբեր փուլերում, հիմնականում՝ սոխուկների պահպանման ընթացքում: Առավելապես վարակվում են մեխանիկական վնասվածքներով կամ միջատների (հատկապես սոխի ճանճի) կողմից վնասված, ինչպես նաև գերխոնավ հողում աճած, գերհասունացած, վատ օդափոխվող պահեստներում պահվող սոխուկները:	Վարակված սոխուկների մեծ մասը պահեստ տեղափոխելիս տեսանելի ախտանիշներ չի ունենում: Դրանց հիմքային մասում առաջանում է սպիտակավուն թաղիքանման փառ: Ժամանակի ընթացքում սոխուկները փափկում են և աստիճանաբար փտում:	Փտումը զարգանում է +13...+30 °C պայմաններում, օպտիմալ են +22...+23 °C ջերմաստիճանը և օդի հարաբերական բարձր խոնավությունը:
Ասպերգիլիոզ կամ սև փտում (<i>Aspergillus niger</i>)	Մի շարք բուսատեսակներ, այդ թվում՝ լուլիկ, խաղող, գետնընկույզ և այլն	Սերմեր, բուսական մնացորդներ, հող	Սոխուկները վարակվում են վեգետացիայի ավարտին՝ բերքահավաքից առաջ: Հիվանդությունը սովորաբար զարգանում է սոխուկների վզիկային կամ կողային մասում, երբ թեփուկները սկսում են չորանալ: Պահեստում պահպանման ընթացքում վարակը մի սոխուկից փոխանցվում է մյուսին: Հիմնականում վարակվում են վնասված, այլ մակաբույծներով վարակված, չհասունացած, գերխոնավ սոխուկները, հատկապես, երբ խախտվում են պահպանման անհրաժեշտ պայմանները:	Սոխուկների վարակված հյուսվածքները գունազրկվում են, թեփուկները կնճռոտվում են, իսկ օդի հարաբերական բարձր խոնավության պայմաններում վերին շերտի չոր թեփուկների վրա կամ չոր և հյութալի թեփուկների միջև առաջանում է սևիկ սպորատվության սև բորբոս: Վարակը կարող է վզիկային մասից տարածվել նաև կենտրոնական հատվածի հյութալի թեփուկների վրա:	Հիվանդությունն ինտենսիվորեն զարգանում է +28...+34 °C ջերմաստիճանի և օդի 80 % հարաբերական խոնավության պայմաններում: Կարող է զարգանալ նաև +3...+4 °C պայմաններում:
Բակտերիալ թաց փտում (<i>Pectobacterium carotovorum subsp. carotovorum</i>)	Մի շարք բուսատեսակներ, այդ թվում՝ սոխ, գազար, կարտոֆիլ, կաղամբ և այլն	Հող, բուսական մնացորդներ, սոխուկներ, սերմեր	Հիմնականում առաջանում է դեռևս դաշտում և զարգանում սոխի պահպանման ընթացքում: Առավելապես վարակվում են մեխանիկական վնասվածքներով, արևային այրվածքներով, միջատների կողմից վնասված սոխուկները: Հիվանդության զարգացմանը նպաստում են բերքի հասունացման շրջանում ջերմաստիճանի կտրուկ տատանումները:	Հիվանդությունը նախնական շրջանում արտահայտվում է միայն սոխուկի կտրվածքի վրա: Առողջ, հյութալի թեփուկների շերտի տակ դիտվում է փտող թեփուկների գորշացած, լորձոտ 1-2 շերտ: 2-3 ամսից սոխուկն ամբողջովին փտում է՝ արձակելով գարշահոտություն:	Օպտիմալ է +20...+30 °C ջերմաստիճանը: Պահեստում հիվանդությունը կարող է զարգանալ անգամ +3 °C պայմաններում:

*Կազմվել է հեղինակի կողմից:



Նկ. 5. Հիմքային փտումով և ասպերգիլիոզով վարակված սոխուկ:



Նկ. 6. Բակտերիալ թաց փտումով և ասպերգիլիոզով վարակված սոխուկ:

Պահեստ տեղափոխելուց հետո նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ռուսական սորտի ծլած բոլոր սոխուկները վարակված են եղել տարբեր փտումներով: Ընդ որում՝ ասպերգիլիոզով կամ բակտերիալ թաց փտումով և ասպերգիլիոզով վարակվածությունը կազմել է 90,6 %, իսկ բակտերիալ թաց փտումով վարակվածությունը՝ 9,4 %: Խաթունարիսի տեղական սորտի սոխուկների՝ ժամանակից շուտ ծլելու և սնկային կամ բակտերիալ հիվանդություններով վարակվածության միջև կապ չի բացահայտվել:

Հարկ է նշել, որ *Aspergillus Micheli* ցեղի սնկերն արտազատում են մարդու առողջության համար խիստ վտանգավոր (քաղցկեղածին) միկոտոքսին՝ աֆլատոքսին: Սև փտումով վարակվածության դեպքում թեփուկների խոտանումից հետո անհրաժեշտ է սոխուկներն օգտագործել միայն ջերմամշակումից հետո:

Պահպանման ժամանակ գլուխ սոխի հիմնական վարակիչ հիվանդությունների հարուցիչների համեմատական վերլուծությունը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Եզրակացություն

Գլուխ սոխի պահպանման ընթացքում բացահայտվել և նույնականացվել է ֆիտոպաթոգեն ութ միկրոօրգանիզմ՝ մեկ բակտերիալ, յոթ սնկային: Հիմնականում գրանցվել են բակտերիալ թաց, սև, վզիկային մոխրագույն և հիմքային փտումները:

Խաթունարիսի տեղական սորտի սոխը պահպանման ընթացքում հիմնականում վարակվել է բակտերիալ թաց, հազվադեպ՝ մոխրագույն և սև փտումներով, իսկ ռուսական Կարատալսկի սորտի սոխը՝ առավելապես սև փտումով, հազվադեպ՝ բակտերիալ թաց և մոխրագույն փտումներով: Ընդ որում՝ երկու սորտերի տարբեր փտումներով ընդհանուր վարակվածությունը կազմել է համապատասխանաբար 18,4 և 28,5 %: Գրանցվել է նաև Կարատալսկի սորտի միևնույն սոխուկի վարակվա-

ծություն հիմքային փտումով և ասպերգիլիոզով կամ ասպերգիլիոզով և բակտերիալ թաց փտումով: Ստվերում չորացված սոխի համեմատությամբ պահեստում առանց չորացման պահպանվող ռուսական սոխի խմբաքանակում հայտնաբերվել է նաև ասպերգիլիոզով և մոխրագույն փտումով առավել բարձր վարակվածություն:

Կարատալսկի սորտի պահպանման ընթացքում, ի տարբերություն մոխրագույն և ֆուզարիոզային հիմքային փտումներով վարակված սոխուկների, բակտերիալ թաց փտումով, ասպերգիլիոզով վարակված սոխուկները ծլել են ժամանակից շուտ: Խաթունարիսի տեղական սորտի սոխուկների՝ ժամանակից շուտ ծլելու և սնկային կամ բակտերիալ հիվանդություններով վարակվածության միջև կապ չի բացահայտվել:

Սև փտումով վարակվածության դեպքում թեփուկների խոտանումից հետո անհրաժեշտ է սոխուկներն օգտագործել միայն ջերմամշակումից հետո:

Գլուխ սոխի պահպանման ժամանակ առաջացող հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումներ մշակելիս անհրաժեշտ է հիմք ընդունել հարուցիչների համեմատական ուսումնասիրությունը: Միաժամանակ խորհուրդ է տրվում՝

- ցանքի և տնկման համար օգտագործել առողջ սերմ-նանյութ ու տնկանյութ,
- միևնույն դաշտում սոխի մշակություն իրականացնել երեք տարվանից ոչ շուտ,
- մշակության ընթացքում խուսափել հողի գերխոնավությունից և չկիրառել ազոտական պարարտանյութերի բարձր չափաքանակներ,
- խոնավ եղանակին բերքահավաք չկատարել,
- բերքահավաքից հետո դաշտում և հարակից տարածքներում ոչնչացնել բուսական մնացորդները,
- պահեստ տեղափոխելուց առաջ սոխուկները տեսակավորել և չորացնել ստվերոտ վայրում, պահպանել միայն չվնասված թեփուկներով սոխուկները,

- պահեստները նախապես մաքրել, ախտահանել,
- սոխուկները պահել 0...+2 °C պայմաններում, տեղափոխման և պահպանման ընթացքում խուսափել ջերմաստիճանի տատանումներից:

Գրականություն

1. Авазов С.Э. Основные болезни лука при хранении и мониторинг их развития // Бюллетень науки и практики. - Т. 4. - № 2. - 2018. - С. 179-182, https://docs.wixstatic.com/ugd/208d22_095dd57868a64116966fd52854f644cb.pdf?index=true (դիտվել է՝ 20.03.2020 թ.).
2. Дементьева М.И. Фитопатология. - М.: Агропромиздат, 1985. - 397 с.
3. Ташпулатов Ж.Ж. Изучение микрофлоры некоторых плодов и овощей в период хранения: автореф. дисс. канд. биол. наук. - Ташкент, 1994. - 22 с.
4. Чумаков А.К. и др. Основные методы фитопатологических исследований. - М.: Колос, 1974. - 191 с.
5. www.fao.org/faostat/en/#rankings/countries_by_commodity, ՄԱԿ-ի ՊԳԿ վիճակագրական տվյալներ, 2018 թ. (դիտվել է՝ 25.04.2020 թ.):
6. en.wikipedia.org/wiki/Pectobacterium_carotovorum, [Pectobacterium carotovorum](http://en.wikipedia.org/wiki/Pectobacterium_carotovorum), Վիկիպեդիա ազատ հանրագիտարան (դիտվել է՝ 25.04.2020 թ.):
7. www.mycobank.org/, MYCOBANK Սևերի վերաբերյալ տվյալների բազա. Նոմենկլատուրա և տեսակների բանկ (դիտվել է՝ 20.03.2020 թ.):
8. worddisk.com/wiki/Onion/, Worddisk: Onion. Տեղեկատվական կյուրեր (դիտվել է՝ 25.04.2020 թ.):
9. www.forestryimages.org/browse/detail.cfm?imgnum=5076066, Forestry Images (դիտվել է՝ 15.03.2021 թ.).

Наиболее распространенные болезни репчатого лука в период хранения и меры их предотвращения

Г.В. Авагян

Национальный аграрный университет Армении

Ключевые слова: репчатый лук, хранение, серая гниль, аспергиллез, мокрая бактериальная гниль

Аннотация. В ходе исследований было обнаружено восемь фитопатогенных микроорганизмов у репчатого лука.

В период хранения лук местного сорта Хатунархи в основном заражается мокрой, реже серой и черной гнилью (общая зараженность 18,4 %), а лук русского сорта Караталский - преимущественно черной, реже мокрой бактериальной и серой гнилью (общая зараженность 28,5 %).

В отличие от луковок местного сорта Хатунархи, луковки русского сорта Караталский, зараженные мокрой бактериальной гнилью и аспергиллезом, прорастают раньше срока.

Most Common Diseases of Onion in the Storage Period and Preventive Measures

G.V. Avagyan

Armenian National Agrarian University

Keywords: onion, storage, gray rot, black rot, bacterial soft rot

Abstract. Throughout conducted investigations eight species of phytopathogenic micro-organisms in the bulb onion were detected.

The local onion variety "Khatunarkh" is mainly infected with bacterial soft rot and rarely with gray and black rots (total infectivity -18.4 %) during the storage period, while the Russian onion variety "Karatalski" is mostly infected with black rot and more seldom with bacterial soft and gray rots (total infectivity -28.5 %).

Unlike the bulbs of "Khatunarkh" local variety, those of the Russian variety "Karatalski" infected with bacterial soft rot and aspergilliosis germinate prematurely during the storage time.

Ընդունվել է՝ 31.03.2021 թ.
Գրախոսվել է՝ 04.04.2021 թ.



ՀՏԴ 630*17:632.9

ԵՐԵՎԱՆԻ ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐԻ ԲՈՒՐԱՎԵՏ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՆՈՐ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐ. ԴՐԱՆՑ ԴԵՄ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ա.Յ. Բաբայան

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

babayanarman9627@gmail.com

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Բանալի բառեր՝

ակացիայի գալամվակ,
ակացիայի սղոցող,
մարմարյա մլուկ,
Bacillus thuringiensis,
կենսաբանական պայքար

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Երևանի զբոսայգիներում և պուրակներում իրականացված հետազոտությունների համաձայն՝ ակացիայի գալամվակի (*Obolodiplosis robiniae*), ակացիայի սղոցողի (*Euura tibialis*) և շագանակագույն մարմարյա մլուկի (*Halyomorpha halys*) կենսագործունեության արդյունքում բուրավետ ծառատեսակների աճը և զարգացումը դանդաղում են, դրանք կորցնում են նաև արտաքին գեղազարդային տեսքը: Բացի այդ՝ նպաստավոր պայմաններ են ստեղծվում այլ վնասատուների զարգացման համար:

Ըստ փորձերի արդյունքների՝ BT մանրէաբանական պատրաստուկների նշված շտամները բավական արդյունավետ են, ուստի դրանք կարելի է կիրառել *E. tibialis*-ի, *O. robiniae*-ի և *H. halys*-ի դեմ նախատեսվող կենսաբանական և ինտեգրացված պայքարում:

Նախաբան

Բուրավետ ծառատեսակները ոչ միայն փոշեպաշտպան, ծխապաշտպան, աղմկապաշտպան և գեղագիտական նշանակություն ունեն, այլև այգիներ են «բերում» մեծ թվով փոշոտող միջատներ՝ նպաստելով այլ բուսատեսակների կենսաբանական գործընթացներին:

Վերջին տարիներին կլիմայի գլոբալ փոփոխությունները, լայնամասշտաբ քաղաքաշինությունը, ինչպես նաև կանաչապատման գոտիներ ներմուծված բուրավետ նոր ծառատեսակները (Մագնոլիա՝ *Magnolia*, Սակուրա՝ *P. serrulata*, և այլն) նպաստում են այգիներում վնասատուների նոր տեսակների տարածմանը:

Դիլիջանի ֆաունայի համար ֆիտոֆագ միջատների չորս նոր տեսակների, այդ թվում՝ ակացիայի գալամվակի (*Obolodiplosis robiniae*, Haldeman, 1847, *Diptera: Cecidomyiidae*) և ակացիայի սղոցողի (*Euura tibialis*,

Newman, 1837, *Hymenoptera: Tenthredinidae*) մասին առաջին անգամ հիշատակել է Ա.Ի. Գուբինը (A.I. Gubin, 2021):

Մեր հետազոտություններով նույնպես հաստատվել է կեղծ ակացիաներին (*Robinia pseudoacacia*) զգալի վնաս պատճառող այս վնասատուների առկայությունը Երևանի տարբեր զբոսայգիներում: Ընդ որում՝ բուրավետ ծառատեսակների վնասատու միջատներից է նաև Հայաստանում աստիճանաբար տարածվող շագանակագույն մարմարյա մլուկը (*Halyomorpha halys*, Stal, 1855, *Hemiptera: Pentatomidae*):

Նյութը և մեթոդները

2020-2021 թվականներին հետազոտության են ենթարկվել Երևանի տարբեր կանաչապատ գոտիներում

մեր կողմից հաշվառված բուրավետ ծառատեսակները և դրանց վնասատուները: Հետազոտվել է ծառերի ողջ սաղարթը, գրանցվել և հավաքվել են հայտնաբերված բոլոր ֆիտոֆագերը (մորֆոլոգիական զարգացման տարբեր փուլերում), որոշվել են դրանց վնասի բնույթը և զարգացման առանձնահատկությունները: Վաղ գարնանը հետազոտվող ծառերի բնի վրա՝ գետնից 0,5 մ բարձրությամբ փաթաթվել են սոսնձող գոտիներ: Կիրառվել են նաև լուսաթակարդներ: Վնասատուի նախահասուն փուլերը (թրթուրներ, հարսնյակներ) տեղափոխվել են ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի բնահողի կենդանաբանության և միջատաբանության լաբորատորիա, պահվել մինչև զարգացման հասուն փուլը: Տեսակային կազմը որոշելուց հետո միջատները պահվել են 70 %-անոց էթիլ սպիրտում: Հետազոտությունները կատարվել են 5-10 օր պարբերականությամբ:

Ըստ սաղարթի հարկայնության՝ *O. robiniae*-ի վարակի աստիճանը որոշվել է Օ.Վ. Անտյուխովայի առաջարկած մեթոդներով (Օ.В. Антюхова, 2010):

Կենսաբանական պատրաստուկների ազդեցությունն ուսումնասիրելու նպատակով ծառերի վրայից հավաքված վնասատուները նույն օրը տեղափոխվել են ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի Մանրէների ավանդադրման կենտրոն, տեղադրվել Պետրիի ստերիլ թասիկների մեջ և կերակրվել *Bacillus thuringiensis* (BT) մանրէների տարբեր շտամներով վարակված տերևներով ու ծաղիկներով: Բակտերիաների պատրաստուկների կենսաբանական ակտիվությունը գնահատվել է ֆիտոֆագ միջատների մահացության (LD) աստիճանով (Л.И. Прищепа и др., 2008):

Արդյունքները և վերլուծությունը

Հետազոտությունների ընթացքում *O. robiniae* հայտնաբերվել է Երևանի Ավան վարչական շրջանում գտնվող «Նոր այգի» զբոսայգում աճող կեղծ ակացիաների (*R. pseudoacacia*) վրա: Առավել վարակվածություն դիտվել է երիտասարդ ծառերի մոտ: Այս վնասատուի էգերը ձվադրում են տերևաթիթեղի ստորին մակերեսի եզրերին: Այդ հատվածում տերևը փոքր-ինչ ոլորվում է, և աստիճանաբար գոյանում է գալ: Թրթուրի հասունացմանը զուգահեռ գալը խոշորանում և ստանում է դեղին երանգ, իսկ թրթուրի զարգացումից հետո տերևը չորանում և ընկնում է:

Հարկ է նշել, որ թրթուրն ունի զարգացման երեք հասակ (B. Molnár, 2009, Օ.В. Сивчук и др., 2018): Ձմեռային սերնդի թրթուրները զարգացման ավարտից հետո, դուրս գալով գալից, ընկնում են հողի մեջ և հարսնյակավորվում: Երևանի կլիմայական պայմաններում *O. robiniae*-ն տալիս է երեք սերունդ: Առաջին սերնդի զարգացումը տևում է մայիսից մինչև հունիսի սկիզբ, երկրորդ սերնդի զարգացումը՝ հունիսի առաջին տասնօրյա-

կից մինչև հուլիսի սկիզբ, իսկ երրորդ սերնդինը՝ հուլիսի երկրորդ կեսից մինչև օգոստոսի վերջ: Առաջին երկու սերունդների թրթուրներն առավել բազմաքանակ են:

Մեկ պարզ տերևի վրա դիտվում է 1-2, հազվադեպ՝ 3-5 գալ: Գալերը գոյանում են հիմնականում տերևաթիթեղի հիմքին մոտ, իսկ յուրաքանչյուր գալում զարգանում է 1-3 առանձնյակ:

Ըստ սաղարթի հարկայնության՝ գալերի առաջացումը թույլ է արտահայտված (աղ. 1): Որոշակի ինտենսիվություն նկատվում է սաղարթի ստորին հարկերում, ինչը հիմնականում պայմանավորված է լուսավորության աստիճանով և առավել ինտենսիվ է սաղարթի ստվերային կողմում:

E. tibialis հայտնաբերվել է Ավան և Դավթաշեն վարչական շրջաններում գտնվող զբոսայգիներում: Նպաստավոր պայմանների դեպքում այս վնասատուն կարող է միջև երեք սերունդ տալ (D.V. Alford, 2012):

Աղյուսակ 1. *O. robiniae*-ի կողմից գալերի առաջացումն ըստ *Robinia pseudoacacia*-ի սաղարթի հարկայնության (2020-2021 թթ.)*

Տարիներ	Սաղարթի հարկայնությունը	Հաշվառված բարդ տերևների քանակը	Վարակված տերևների քանակը	Վարակվածությունը, %
2020	ստորին հարկ	150	62	53,3
	միջին հարկ		50	33,3
	վերին հարկ		45	30,0
2021	ստորին հարկ	150	64	44,6
	միջին հարկ		53	35,3
	վերին հարկ		49	32,6

*Կազմվել է հեղինակի կողմից:

E. tibialis-ն ակտիվանում է գարնան վերջից մինչև ամառվա վերջ: Ձվադրում է հիմնականում երիտասարդ ընձյուղների տերևների վրա: Մի քանի օրից ձվերից դուրս եկող թրթուրները սնվում են տերևներով: Սնումն առավել ակտիվանում է 30 °C ջերմաստիճանի պայմաններում:

Այգու խոնավ հատվածներում վարակվածության ինտենսիվությունն ավելի բարձր է: Ինտենսիվ սնվելուց հետո թրթուրները թափանցում են հող և հարսնյակավորվում: Հասուն առանձնյակները դուրս են գալիս 2-3 շաբաթից: Գերվարակվածության դեպքում ծառերի աճը դանդաղում է, դրանք կորցնում են գեղագիտական տեսքը: Պարզ տերևի վրա դիտվում է մինչև 4, իսկ երիտասարդ բարդ տերևի վրա՝ 10 վնասատու:

Շագանակագույն մարմարյա մլուկը (*H. halys*) հայտնաբերվել է Կոմիտասի անվան զբոսայգում տնկված Հուդայի ծառի (*Cercis siliquastrum*) և Վահան Չատիկյանի անվան զբոսայգում աճող Սոֆորա ճապոնական (*Styphnolobium japonicum*) ծառերի վրա:

H. halys-ը պոլիֆագ վնասատու է, սնվում է 49 ընտանիքի պատկանող բույսերով (C. Duthie, 2012): Հասուն առանձնյակները դուրս են գալիս մայիսին: Չուգավորումից հետո եզը ձվադրում է (20-30 ձու) տերևաթիթեղի ստորին մակերեսին (T.C. Leskey, 2011, C. Duthie, 2012): Սակայն մեր հետազոտությունների ժամանակ կույտերով ձվեր նկատվել են նաև տերևաթիթեղի վերին մակերեսին: Թրթուրներն ունեն զարգացման հինգ հասակ (<https://www.mpi.govt.nz>, <https://xn----8sbalgtagconcpuji4ai0e.xn--plai/sites/default/files/cc>):

Վարակված տերևները գունաթափվում են, ենթարկվում նեկրոզի, դրանց վրա գոյանում են քլորոտիկ բծեր:

BT մանրէների տարբեր շտամների պատրաստուկները կիրառվում են բույսերի կենսաբանական պաշտպանության գործում: Վնասատուների դեմ բակտերիաների պատրաստուկներ կիրառելու համար անհրաժեշտ է գնահատել ֆիտոֆագերի զգայունությունը պատրաս-

տուկների տարբեր շտամների նկատմամբ և կարգավորել դրանց օպտիմալ չափաբաժինը:

Լաբորատորիայում Պետրիի թասերի մեջ առանձնացվել է յուրաքանչյուր տեսակի 10-ական միջատ, և դրանց զարգացման համար ապահովվել են նպաստավոր պայմաններ՝ անհրաժեշտ խոնավություն և ջերմություն (նկ. 1):

Բոլոր շտամները կիրառվել են 1 մլ-ում 14 մլն սպոր Նորմայով՝ երեք կրկնողությամբ: BT-ն արհեստական սննդամիջավայրում աճեցվել է 2-3 օր, որից հետո կիրառվել վնասատուների դեմ:

Բակտերիաների շտամների փորձարկման արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում:


Աղյուսակ 2-ի և նկար 2-ի տվյալների համաձայն՝ փորձարկված շտամներից առավել բարձր ազդեցություն ցուցաբերել է 26-70-ը: Այսպես՝ *E. tibialis*-ի դեպքում զրանցվել է 100 %, *O. robiniae*-ի և *H. halys*-ի դեպքում՝ համապատասխանաբար 83,3 և 96,6 % մահացություն: Համեմատաբար ցածր ազդեցություն է գործել 26-80 շտամը. *E. tibialis*-ի դեպքում մահացությունը կազմել է 76,6, *O. robiniae*-ի և *H. halys*-ի դեպքում՝ 70 %:

Պատրաստուկների ազդեցությունը նկատվել է կիրառման արդեն երկրորդ օրը. մահացած վնասատուները ստացել են սև գույն (նկ. 3):

BT-ի վրա հիմնված պատրաստուկներն ունեն ազդեցության լայն սպեկտր: Բյուրեղային բակտերիաների տեխնոլոգիական կիրառումը հեռանկարային է, քանի որ դրանց հիման վրա մշակված են մանրէաբանական պատրաստուկների ընտրության և արդյունաբերական արտադրության մի շարք մեթոդներ:



Նկ. 1. *Bacillus thuringiensis* 22-91 շտամի փորձարկումը մարմարյա մլուկի վրա (*H. halys*):



Նկ. 2. *Bacillus thuringiensis* պատրաստուկի շտամների ազդեցությունը ֆիտոֆագերի վրա (կազմվել է հեղինակի կողմից):

Աղյուսակ 2. Բուրավետ ծառերի վնասատուների դեմ կիրառվող BT պատրաստուկի տարբեր շտամների ազդեցությունը

Փորձարկման տարբերակներ	Կենդանի վնասատուների ընդհանուր քանակը, հատ	BT-ի կիրառումից հետո մահացած թրթուրների քանակը, հատ		վնասատուների մահացությունը, %
		2 օր անց	4 օր անց	
Ակացիայի սղոցող (<i>E. tibialis</i>)				
<i>B. thuringiensis</i> , 26-70 շտամ	30	28	2	100
<i>B. thuringiensis</i> , 22-91 շտամ		27	1	93,3
<i>B. thuringiensis</i> , 27-28 շտամ		20	6	86,6
<i>B. thuringiensis</i> , 26-80 շտամ		18	5	76,6
<i>B. thuringiensis</i> , 24-91 շտամ		20	5	83,3
Ստուգիչ	30	-	-	-
Ակացիայի գալամակ (<i>O. robiniae</i>)				
<i>B. thuringiensis</i> , 26-70 շտամ	30	25	-	83,3
<i>B. thuringiensis</i> , 22-91 շտամ		21	4	83,3
<i>B. thuringiensis</i> , 27-28 շտամ		21	3	80
<i>B. thuringiensis</i> , 26-80 շտամ		19	2	70
<i>B. thuringiensis</i> , 24-91 շտամ		22	1	76,6
Ստուգիչ	30	-	-	-
Շագանակագույն մարմարյա մլուկ (<i>H. halys</i>)				
<i>B. thuringiensis</i> , 26-70 շտամ	30	15	14	96,6
<i>B. thuringiensis</i> , 22-91 շտամ		11	12	76,6
<i>B. thuringiensis</i> , 27-28 շտամ		13	11	80
<i>B. thuringiensis</i> , 26-80 շտամ		15	6	70
<i>B. thuringiensis</i> , 24-91 շտամ		14	8	73,3
Ստուգիչ	30	-	-	-

*Կազմվել է հեղինակի կողմից:



Նկ. 3. *Bacillus thuringiensis* պատրաստուկի ազդեցությամբ սևացած *E. tibialis*-ի թրթուրներ:

Եզրակացություն

Երևանի զբոսայգիներում և պուրակներում տարածված *O. robiniae*, *E. tibialis* և *H. halys* վնասատուների կենսագործունեության արդյունքում դանդաղում են բուրավետ ծառերի աճը և զարգացումը, նվազում է բույսի դիմադրողականությունը, ինչը նպաստավոր պայմաններ է ստեղծում երկրորդային վնասատուների զարգացման համար: Միաժամանակ այդ ծառատեսակները կորցնում են գեղազարդային տեսքը:

Պատրաստուկի տարբեր շտամների լաբորատոր փորձարկումների արդյունքում BT 26-70 շտամը նշված երեք վնասատուների դեմ ցուցաբերել է առավել բարձր արդյունավետություն: *E. tibialis*-ի դեպքում մահացությունը կազմել է 100 %, *O. robiniae*-ի և *H. halys*-ի դեպքում՝ համապատասխանաբար 83,3 և 96,6 %: Միջատների մահացություն է գրանցվել պատրաստուկի կիրառման երկրորդ օրը:

Ըստ փորձերի արդյունքների՝ BT մանրէաբանական պատրաստուկների նշված շտամները բավական արդյունավետ են: Դրանք կարելի է կիրառել *E. tibialis*-ի, *O. robiniae*-ի և *H. halys*-ի դեմ նախատեսվող կենսաբանական և ինտեգրացված պայքարում:

Գրականություն

1. Антюхова О.В. Белоакациевая моль-пестрянка (*Parectopa robinella* Clemens) - опасный вредитель *Robinia pseudoacacia* L. в Приднестровье // Известия Санкт-Петербургской лесотехнической академии. N 192. - СПб.: ГЛТА, 2010. - С. 4-11.
2. Прищепа Л.И., Микульская Н.И., Войтка Д.В. Методические указания по проведению регистрационных испытаний биопрепаратов для защиты растений от вредителей и болезней. - Несвиж, 2008.

3. Синчук О.В., Рогинский А.С., Бура С.В. Первая находка *Obolodiplosis robiniae* (Haldeman, 1847) (*Diptera: Cecidomyiidae*) на территории Брянской области // Евразийский энтомологический журнал. - 2018. - Т. 17. N 6. - С. 401-402.
4. Alford, D.V. (2012). Pests of Ornamental Trees, Shrubs and Flowers: A Color Handbook. Elsevier Academic Press, - p. 355.
5. Duthie, C. (2012). Risk Analysis of *Halyomorpha halys* (Brown marmorated stink bug) on All Pathways / Ministry for Primary Industries, - p. 51.
6. Gubin, A.I. (2021). Four Invasive Alien Phytophagous Insects New to Armenia. *Phytoparasitica* 49, - pp. 163-166. <https://doi.org/10.1007/s12600-020-00853-0>.
7. Leskey, T.C. (2011). Impact of the Invasive Brown Marmorated Stink Bug in Vineyards // Presentation 0270: 59th Annual Meeting of the Entomological Society of America (November 13–16).
8. Molnár, B., Boddum, T., Szócs, G., Hillbur, Y. (2009). Occurrence of Two Pest Gall Midges, *Obolodiplosis robiniae* (Haldeman) and *Dasineura gleditchiae* (Osten Sacken) (*Diptera: Cecidomyiidae*) on Ornamental Trees in Sweden // *Entomologisk Tidskrift*. - Vol. 130, - pp. 113-120.
9. <https://www.mpi.govt.nz/dmsdocument/3943/direct> (ընդունվել է՝ 15.07.2021 թ.).
10. <https://xn----8sbalgtaqconcpuji4ai0e.xn--p1ai/sites/default/files/cc4b50c01303d0f1f66e22f6e5da818c.pdf> Коричнево-мраморный клоп. Информационный листок Россельхозцентра, 2018 (ընդունվել է՝ 14.07.2021 թ.).

Несколько новых вредителей душистых пород деревьев в парках Еревана: меры биологической борьбы против них

А.О. Бабаян

Национальный аграрный университет Армении

Ключевые слова: акационная галлица, акационный пилильщик, мраморный клоп, *Bacillus thuringiensis*, биологическая борьба

Аннотация. Согласно исследованиям, проведенным в парках и садах Еревана, в результате жизнедеятельности акационной галлицы (*Obolodiplosis robiniae*), акационного пилильщика (*Euura tibialis*) и коричневого мраморного клопа (*Halyomorpha halys*), рост и развитие душистых пород деревьев замедляется, они теряют свою внешнюю декоративную привлекательность. Кроме того были созданы благоприятные условия для развития других вредителей.

Согласно лабораторным исследованиям различных штаммов препарата ВТ, наиболее высокие результаты показал штамм ВТ 26-70. В случае *E. Tibialis* - а смертность составляет 100 %, а в случаях *O. Robiniae* и *H. Halys* соответственно - 83,3 и 96,6 %.

Several New Pests of Fragrant Tree Species in Yerevan Parks: Biological Control Measures

A.H. Babayan

Armenian National Agrarian University

Keywords: black locust gall midge (*Obolodiplosis robiniae*), sawflies (*Euura tibialis*), brown marmorated stink bug (*Halyomorpha halys*), *Bacillus thuringiensis*, biological control

Abstract. According to the investigations conducted in the Yerevan parks and public gardens, the growth and development of the fragrant tree species are retarded due to the life activity of *Obolodiplosis robiniae* (black locust gall midge), *Euura tibialis* (sawflies) and *Halyomorpha halys* (brown marmorated stink bug); they also lose their decorative appearance. Besides, favorable conditions are created for the development of other pests.

The results of trials have indicated that the mentioned strains of BT microbiological preparation are rather effective, and hence can be applied in the planned and integrated struggle against *E. tibialis*, *O. robiniae* and *H. halys*.

Ընդունվել է՝ 22.07.2021 թ.
Գրախոսվել է՝ 31.07.2021 թ.



ՀՏԴ 502.51:574(479.25)

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԶՐԱԷԿՈՂԱՄԱԿԱՐԳԻ ԿԵՆՍԱԾԻՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ**Ս.Զ. Թամոյան գ.գ.թ.**

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

samveltamoyang@gmail.com**Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն****Բանալի բառեր՝**

կենսածին տարրեր,
ջրհավաք ավազան,
էվտրոֆացում,
կենսածին
ծանրաբեռնվածություն,
հոսքաջրեր

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Հետազոտություններն իրականացվել են Սևանա լճի ջրհավաք ավազանի բնակավայրերի, անասնապահական ֆերմաների, համալիրների, կերհանդակների և առափնյա ջրածածկվող տարածքների վնասակար արտանետումների հետևանքով ջրային էկոհամակարգի կենսածին ծանրաբեռնվածության գնահատման նպատակով:

Ըստ հաշվարկների՝ լճի ջրի դրական հաշվեկշռի դեպքում ջրաէկոհամակարգում կուտակվում է կենսածին տարրերի (ազոտ և ֆոսֆոր) մնացորդային քանակություն, որն ավելանում է ջրի մակարդակի շարունակական բարձրացմանը զուգընթաց: Ուստի լիճ թափվող հոսքերից կենսածին տարրերի հեռացումը և ջրածածկվող տարածքների մաքրումն առաջնահերթ միջոցառումներ են:

Նախաբան

Կենսածին տարրերով (հատկապես ազոտով և ֆոսֆորով) Սևանա լճի աղտոտման հիմնական աղբյուրը ջրհավաք ավազանն է: Լճի ջրհավաք ավազանի ներկա սահմաններն ընդգրկում են Նան Որոտան և Արփա գետերի ջրհավաք ավազանի որոշ մասը՝ Սպանդարյանի և Կեչուտի ջրամբարները շրջակա տարածքներով: Կենսածին աղտոտումը հիմնականում պայմանավորված է բնակավայրերի, ջրածածկման ենթակա առափնյա հողագրունտների, գյուղատնտեսական արտադրության՝ հողատեսքերի, անասնապահական ֆերմաների և համալիրների վնասակար արտանետումներով:

Հարկ է նշել, որ լճի օլիգոտրոֆ շրջանի կենսածին ծանրաբեռնվածության գնահատում չի կատարվել: Սակայն ներկայումս ջրի ծավալի կրճատմամբ և վնա-

սակար արտանետումների ավելացմամբ փոփոխվել է լճի կենսածին ծանրաբեռնվածության մակարդակը, և բարձրացել է տրոֆայնության աստիճանը: Արդյունքում ակտիվացել են էվտրոֆացման գործընթացները:

Նյութը և մեթոդները

Ուսումնասիրության նպատակը Սևանա լճի կենսածին ծանրաբեռնվածության մակարդակի գնահատումն է: Խնդիր է դրվել գնահատել Հրազդան գետով ազոտի, ֆոսֆորի մուտքի և ելքի հաշվեկշիռը լճում:

Բնակավայրերից, անասնապահական ֆերմաներից, համալիրներից և կերհանդակներից միջավայր արտանետվող ազոտի ու ֆոսֆորի քանակությունը գնահատվել է ըստ Ռ. Վոլենվայդերի մեթոդի (R.A. Vollenweider, 1968): Վերջինիս համաձայն՝ կենցաղային թափոնների

միջոցով քաղաքներից շրջակա միջավայր արտանետվող ազոտը և ֆոսֆորը մեկ շնչի հաշվով տարեկան կազմում են 10,220 և 1,022 կգ, գյուղական բնակավայրերից՝ համապատասխանաբար 5,110 և 0,511 կգ:

Խոշոր եղջերավոր կենդանիների արտաթորանքի միջոցով շրջակա միջավայր արտանետվող ազոտը և ֆոսֆորը 1000 կգ կենդանի զանգվածի հաշվով տարեկան կազմում են 156 և 17 կգ, մանր եղջերավոր կենդանիների և խոզերի դեպքում՝ համապատասխանաբար 119 և 20, 150 և 45 կգ:

Եթե խոշոր եղջերավոր կենդանիների միջին կենդանի զանգվածն ընդունենք 450, մանր եղջերավորներինը՝ 50, խոզերինը՝ 80 կգ, ապա միջավայր արտանետվող կենսածին տարրերը կկազմեն՝

$$N_{\text{խ.ե}} = 70,2 \text{ կգ}, P_{\text{խ.ե}} = 7,65 \text{ կգ}, N_{\text{մ.ե}} = 5,95 \text{ կգ}, \\ P_{\text{մ.ե}} = 1 \text{ կգ}, N_{\text{խ}} = 12,0 \text{ կգ}, P_{\text{խ}} = 3,6 \text{ կգ}:$$

Արդյունքները և վերլուծությունը

Սևանա լճի կենսածին ծանրաբեռնվածությունը ջրից ավազանի բնակչության թվի և գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի հաշվով գնահատելու նպատակով, ըստ ընդունված մեթոդիկայի (С.А. Кондратов и др., 1997), հաշվարկվել է լիճը սնող ջրային էկոհամակարգեր թափանցող ազոտի և ֆոսֆորի տարեկան քանակությունը:

Սևանա լճի ջրից ավազանի բնակչության և գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի վերաբերյալ 2017-2019 թթ. միջին տվյալները ներկայացված են աղյուսակներ 1, 2-ում:

Աղյուսակ 1. Սևանա լճի ջրից ավազանի բնակչության թիվն ըստ տարածաշրջանների, մարդ*

Տարածաշրջաններ	Քաղաքային բնակավայրեր	Գյուղական բնակավայրեր
Մարտունի	11739	78220
Գավառ	18721	34698
Վարդենիս	12501	27282
Սևան**	19079	10477
Ճամբարակ**	0	2509
Ընդամենը	62040	153186

* ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2019 թ.:

**Սևանի և Ճամբարակի տարածաշրջաններից ընտրվել են միայն լճի ջրից ավազանի բնակավայրերը:

Աղյուսակ 2. Սևանա լճի ջրից ավազանի անասնագլխաքանակը, գլուխ*

Խոշոր եղջերավոր կենդանիներ (այդ թվում՝ ձիեր)	Խոզեր	Ոչխարներ և այծեր	Ձիեր
107090	14290	97610	1330

*ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2019 թ.:

Ըստ ներկայացված ցուցանիշների՝ ազոտի և ֆոսֆորի քանակությունը կազմում է՝

$$N = N_{\text{բ.ք}} + N_{\text{բ.գ}} + N_{\text{խ.ե}} + N_{\text{մ.ե}} + N_{\text{խ}} = \\ = 62040 \cdot 10,22 + 153186 \cdot 5,11 + 108420 \cdot 70,2 + \\ + 97610 \cdot 5,95 + 14290 \cdot 12,0 = 634048,8 + 782780,5 + \\ + 7611084,0 + 580779,5 + 171480,0 = 9780172,8 \text{ կգ},$$

$$P = P_{\text{բ.ք}} + P_{\text{բ.գ}} + P_{\text{խ.ե}} + P_{\text{մ.ե}} + P_{\text{խ}} = 62040 \cdot 1,02 + \\ + 153186 \cdot 0,51 + 108420 \cdot 7,65 + 97610 \cdot 1 + 14290 \cdot 3,6 = \\ = 63280,8 + 78124,9 + 829413,0 + 97610 + 51444,0 = \\ = 1022262,7 \text{ կգ},$$

որտեղ *բ.ք* և *բ.գ*-ն քաղաքային և գյուղական բնակչության թիվն են, *խ.ե*, *մ.ե* և *խ*-ն՝ համապատասխանաբար խոշոր և մանր եղջերավոր կենդանիների, խոզերի գլխաքանակը:

Այսպիսով՝ Սևանա լճի ջրից ավազանի բնակավայրերից տարեկան շրջակա միջավայր են արտանետվում 9780172,8 կգ ազոտ և 1022262,7 կգ ֆոսֆոր: Ընդ որում՝ նշված քանակությունն ամբողջությամբ կամ մասամբ հայտնվում է լճում: Ըստ Ս.Ա. Կոնդրատևի՝ մակերևութային ջրեր և գետնաջրեր են թափանցում ֆոսֆորի 1,5, ազոտի 10-20 %-ը (С.А. Кондратов и др., 1997):

Հարկ է նշել, որ կենսածին տարրերի մի մասը Սևանա լճից արտահոսում է Հրազդան գետով: Սակայն լճում կարող է պահպանվել ազոտի և ֆոսֆորի մնացորդային քանակություն, որը հնարավոր է որոշել ջրային հաշվեկշռի վերլուծության միջոցով:

2002-2016 թթ. միջին տվյալների համաձայն՝ Սևանա լճի ջրային հաշվեկշռում տարեկան մուտքային մասը գետերով կազմել է 742, տեղումներով՝ 571, Արփա-Սևան ջրատարով՝ 175, ստորգետնյա ներհոսքով՝ 94 մլն մ³: Ելքային մասի հիմնական բաղադրիչը՝ գոլորշացումը, տարեկան կազմել է 1088, ստորգետնյա արտահոսքը՝ 14,4, Հրազդան գետով արտահոսքը՝ 178 մլն մ³: Հարկ է նշել, որ լճի տարեկան ակտիվ ջրատվությունը 263 մլն մ³ է (Սևանա լճի հիդրոլոգիական ռեժիմը, 2017):

Այսպիսով՝ նշված ժամանակահատվածում ջրի մուտքային և ելքային մասերը համապատասխանաբար կազմել են 1582,0 և 1280,4 մլն մ³, լճում կուտակվել է 301,6330 մլն մ³ ջուր: Այսինքն՝ ջրի դրական հաշվեկշռի դեպքում լճում կարող է կուտակվել կենսածին տարրերի մնացորդային քանակություն, որը կարելի գնահատել ըստ դրանց կոնցենտրացիաների փոփոխության:

Ջրի ավաք ավազանի բնակավայրերից, անասնապահական ֆերմաներից, համալիրներից և կերհանդակներից տարեկան արտաքին միջավայր արտանետվող ազոտի մոտ 15, իսկ ֆոսֆորի 1,5 %-ը (С.А. Кондратов и др., 1997) կարող է թափանցել լիճ (լճի ծավալը՝ 32,92 մլրդ մ³):

Արդյունքում ազոտի կոնցենտրացիան կկազմի՝

$$9780172,8 \cdot 0,15 : 32920000000 = 0,00004455 \text{ կգ/մ}^3,$$

ֆոսֆորինը՝

$$1022262,7 \cdot 0,015 : 32920000000 = 0,00000465 \text{ կգ/մ}^3:$$

Եթե ընդունենք, որ այդ տարրերը ջրալույծ են, ապա տարվա ընթացքում լճում լրացուցիչ կկուտակվեն $301633000 \cdot 0,00004455 = 13437,75$ կգ ազոտ և $301633000 \cdot 0,00000465 = 1402,62$ կգ ֆոսֆոր:

Լճի ջրի ավաք ավազանում կենսածին տարրերի երկրաքիմիական շրջապտույտը ջրաէկոհամակարգում շարունակվում է կենսաբանական շրջապտույտով: Սակայն այդ տարրերն ամբողջովին չեն յուրացվում օրգանիզմների կողմից, ինչը հանգեցնում է տրոֆայնության զարգացման: Միաժամանակ լճի մակարդակի շարունակական բարձրացման պայմաններում ջրաէկոհամակարգի կենսածին ծանրաբեռնվածությունը մեծանում է:

Ներկայումս Սևանա լճի կենսածին աղտոտման լրացուցիչ աղբյուր են նաև ջրածածկման ենթակա առափնյա հողագրունտները: Ընդ որում՝ 6 մետրով լճի մակարդակի բարձրացման դեպքում դրանց 4550 հա կմա ջրի տակ: Նշված տարածքներում առկա է բուսական կենսազանգվածով և մնացորդներով, օրգանական նյութերով, մանրահողով հարուստ շուրջ 5 մլն մ³ բուսահող (ճմաշերտի տեսքով), որը պարունակում է նաև մոտ 364000 տ հումուս, 23700 տ ընդհանուր ազոտ, 7830 տ ֆոսֆոր: Սակայն այդ արժեքավոր զանգվածը ջրում վերածվում է կենսածին աղտոտման և լճի էվտրոֆացման առաջնային գործոնի (С.Дж. Тамоян, 2008):

2003 թվականից ի վեր Սևանա լճի մակարդակը բարձրացել է շուրջ 4 մ, ինչի հետևանքով ջրածածկվել է նշված մակերեսի մոտ 2/3 մասը՝ 3033 հա: Արդյունքում ջրի տակ է անցել 242667 տ հումուսի, 15800 տ ընդհանուր ազոտի, 5220 տ ֆոսֆորի պարունակությամբ 3,3 մլն մ³ բուսահող:

Եզրակացություն

Սևանա լճի կենսածին աղտոտման գնահատման համաձայն՝ ջրային էկոհամակարգում առկա են կենսածին ծանրաբեռնվածություն (տարեկան մնացորդային հաշվարկով 13437,75 կգ ազոտ և 1402,62 կգ ֆոսֆոր) և դրա մակարդակի բարձրացման ռիսկ (ջրածածկվող տարածքների հաշվով՝ 15800 տ ազոտ, 5220 տ ֆոսֆոր):

Սևանա լիճ թափվող հոսքերից կենսածին տարրերի հեռացումը և ջրածածկման ենթակա տարածքների հիմնովին մաքրումը, այդ թվում՝ ճմաշերտի հեռացումը, լճի կենսածին ծանրաբեռնվածության նվազմանն ուղղված առաջնահերթ միջոցառումներ են:

Ուստի առաջարկում ենք այդ ռիսկի կառավարման և լճի կենսածին ծանրաբեռնվածության նվազեցմանն ուղղված հետևյալ միջոցառումները.

- ա) Սևանա լիճ թափվող հոսքերի աղտոտումը թուլացնելու նպատակով իրականացնել ջրի ավաք ավազանում արտադրվող գոմաղբի և գոմաղբահեղուկի էկոլոգիական կառավարում,
- բ) լիճ թափվող հոսքերից կենսածին տարրերի հեռացման նպատակով ստեղծել դրանց կենսաբանական կլանման միջավայր՝ ջրածածկային էկոհամակարգեր,
- գ) ջրածածկման ենթակա տարածքներից լճի մակարդակի բարձրացման գրաֆիկին համապատասխան ծառերի և թփերի հետ միասին մաքրել-հեռացնել նաև ճմաշերտը:

Գրականություն

1. ՀՀ ԱԻՆ Հիդրոոդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն, Սևանա լճի հիդրոլոգիական ռեժիմը. - Եր., 2017:
2. ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով. - Եր., 2019. <https://armstat.am/am/?nid=82&id=2203> (դիտվել է՝ 04.03.2021 թ.):
3. Кондратов С.А. и др. Оценка внешней нагрузки на Ладожское озеро // Экологическая химия. - Т. 6. - N 2. - 1997. - С. 73-84.
4. Тамоян С.Дж. Растительные остатки как источник биогенного загрязнения в затопляемых почвогрунтах озера Севан // Международная научная конференция. Известия ГАУА. - 2008. - N 2. - С. 46-48.
5. Vollenweider, R.A. (1968). Scientific Fundamentals of the Eutrophication of Lakes and Flowing Waters with Particular Reference to Nitrogen and Phosphorus as Factors in Eutrophication. Paris, Rep. Organization for Economic Co-operation and Development, DAS/CSI/68.27, - 192 p.

Оценка биогенной нагрузки акваэкосистемы озера Севан

С.Дж. Тамоян

Национальный аграрный университет Армении

Ключевые слова: биогенные элементы, водосборный бассейн, эвтрофикация, биогенная нагрузка, сточные воды

Аннотация. Исследования были проведены в населенных пунктах водосборного бассейна озера Севан, животноводческих фермах, комплексах, кормушках и прибрежных территориях с целью оценки биогенной нагрузки водной экосистемы в результате вредных выбросов.

Согласно расчетам, при положительном балансе воды озера в водной экосистеме накапливаются остаточные количества биогенных элементов (азот, фосфор), которые увеличиваются параллельно с непрерывным подъемом уровня воды. В этих условиях удаление биогенных элементов из стоков, впадающих в озеро, и очистка затопляемых территорий являются первоочередными мероприятиями.

Evaluating the Biogenic Load of Water Ecosystem in the Lake Sevan

S.J. Tamoyan

Armenian National Agrarian University

Keywords: biogenic elements, catchment basin, eutrophication, biogenic load, wastewaters

Abstract. Investigations have been conducted to evaluate the biogenic load of water ecosystems caused by harmful emissions from the settlements near the catchment basin of the Lake Sevan, livestock farms and complexes, rangelands, as well as from coastal flooded areas.

According to calculations, residual amount of biogenic elements (nitrogen, phosphorus) is accumulated in water ecosystem in case of positive lake water balance, which gets increased parallel to the continuous water level rise. Hence, discharging the biogenic elements from the streams flowing into the lake and cleaning the flooded areas are considered to be priority measures.

Ընդունվել է՝ 25.03.2021 թ.
Գրախոսվել է՝ 12.04.2021 թ.



ՀՏԴ 634.8:631.8

ԽԱՂՈՂԻ ՏՆԿԱՐԿՆԵՐԻՑ ԱՉՈՏԻ, ՖՈՍՖՈՐԻ ԵՎ ԿԱԼԻՈՒՄԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕՏԱՐՈՒՄԸ ՀՈՂԱՊԱՀՊԱՆՄԱՆ ՍԵՎ ՑԵԼ ՀԱՍՏԱԿԱՐԳՈՒՄ

Ս.Ս. Հարությունյան *գ.գ.դ.*, Լ.Գ. Մաթևոսյան *գ.գ.թ.*

Երկրագործության գիտական կենտրոն

ss_harutyunyan@mail.ru, lusnyak.matevosyan81@mail.ru

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Քանալի բառեր՝

խաղող,
սորոտ,
հիմնական սննդատարրեր,
արտադրական օտարում,
սև ցել

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Արմավիրի մարզի Տալվորիկ համայնքի խաղողի Կանգուն և Հաղթանակ սորոտերի տնկարկներում 2018-2020 թթ. ուսումնասիրվել է վազերի կողմից հիմնական սննդատարրերի արտադրական օտարումը հողապահպանման սև ցել համակարգում:

Հետազոտությունները ցույց են տվել, որ Կանգուն սորոտի 7 տ/հա բերքի և վեգետատիվ զանգվածի դեպքում օտարվում են 35 կգ N, 9 կգ P₂O₅ և 34 կգ K₂O, իսկ Հաղթանակ սորոտի 10 տ/հա բերքի և վեգետատիվ զանգվածի դեպքում՝ համապատասխանաբար 49, 15 և 67 կգ:

Սև ցելի պայմաններում տեղի են ունենում սննդատարրերի ոչ արտադրական կորուստներ, ինչը պետք է հաշվի առնել պարարտանյութերի չափաքանակները որոշելիս:

Նախաբան

Ագրոէկոհամակարգերում օրգանահանքային պարարտանյութերի չափաքանակների որոշման կարևոր նախապայման են սննդատարրերով հողի ապահովվածության աստիճանը և հիմնական սննդատարրերի հաշվեկշիռը, որոնք պայմանավորված են մի շարք գործոններով (հողի ապահպանման համակարգ, կենսաբանական ակտիվություն, ցանքաշրջանառություն, ոռոգման նորմաներ, էրոզիոն գործընթացների ինտենսիվություն, մշակաբույսերի տեսակային, սորոտային կազմ և այլն): Սննդատարրերի հաշվեկշռի հիմնական մասը կազմում է մշակաբույսերի ապրանքային և ոչ ապրանքային կենսազանգվածի միջոցով հողից ազոտի և մոխրային տարրերի օտարումը: Այսինքն՝ սննդատարրերի այն քանակությունը, որը տարեկան միջին հաշվով դուրս է գալիս 1 հա ֆիտոցենոզից: Խաղողի վազերը, տաննյակ տարիներ աճելով և պտղաբերելով

նույն հողակտորում, ամեն տարի հողից դուրս են բերում որոշակի քանակությամբ սննդատարրեր: Ուստի հողում վերջիններիս անհրաժեշտ քանակության վերականգնումը բույսերի բերքատվության մակարդակը պահպանելու կարևոր նախապայման է:

Տարբեր գյուղատնտեսական մշակաբույսերի 1 տ ապրանքային և համապատասխանաբար ոչ ապրանքային արտադրանքի միջոցով օտարվող ազոտի, ֆոսֆորի և կալիումի քանակությունը տատանվում է բավական լայն սահմանում. աշնանացան ցորեն՝ համապատասխանաբար 24-37, 10-13, 18-23 կգ/հա, գարի՝ 22-24, 9-10, 17-23 կգ/հա, եգիպտացորեն՝ 2-3, 1-2, 2-3 կգ/հա, երեք-նուկ (խոտ)՝ 18-22, 5-6, 14-18 կգ/հա, շաքարի ճակնդեղ՝ 4-6, 1,0-1,5, 7 կգ/հա, կարտոֆիլ՝ 4-6, 1,5-1,6, 4-7 կգ/հա, բամբակի հումք՝ 45, 15, 45 կգ/հա (A.B. Петербургский, 1979, A.Ф. Маринчик, B.B. Захарова, 1987, A.И. Донос, 1988, F. Asmus at al., 1988):

խաղողի վազի տարբեր սորտերի 100 g/հա բերքի և վեգետատիվ զանգվածի միջոցով տարեկան հողից օտարվում են 54-110 կգ/հա ազոտ՝ N , 17-40 կգ/հա ֆոսֆոր՝ P_2O_5 , 70-130 կգ/հա կալիում՝ K_2O (Ա.Մ. Мержаниан, 1951, Н.П. Малахова, 1980, К.А. Серпуховитина, 1982, В.М. Уэльский, О.Н. Кононыхина, 1983, С.Г. Бондаренко, 1986):

Վերջին 40 տարիներին Հայաստանի խաղողագործական տարբեր տարածաշրջանների բազմամյա տնկարկներում հիմնական սննդատարրերի արտադրական և կենսաբանական օտարման, ինչպես նաև հաշվեկշռային ուսումնասիրություններն իրականացվել են հողապահպանման տարբեր համակարգերում՝ սև ցելի և բնական խոտածածկի պայմաններում, պարարտացման և ոռոգման տարբեր ռեժիմներով (Ս.Ս. Հարությունյան, 1998, Ս.Ս. Հարությունյան, Ա.Ֆ. Հարությունյան, 2002, Ս.Ս. Հարությունյան, Ա.Մ. Գրիգորյան, 2005, Ս.Ս. Հարությունյան, Ա.Յ. Գրիգորյան, 2009, С.С. Арутюнян, А.С. Арутюнян, 1985, С.С. Арутюнян, 1995, С.С. Арутюнян, А.М. Григорян, 2005):

Թեք հողատարածքներում խաղողի և պտղատու ծառերի միջշարային տարածություններում խոտի աճեցումը հողապահպանման կարևոր միջոցառում է: Սակայն արտադրական խոտածածկով տնկարկներից օտարվող սննդատարրերի քանակությունը 2-5 անգամ գերազանցում է սև ցելից օտարվող սննդատարրերի քանակությունը: պարարտանյութերով չփոխհատուցելու դեպքում տեղի են ունենում հումուսի ու սննդատարրերի դեֆիցիտի խորացում և բույսերի բերքատվության անկում:

Մի շարք եվրոպական երկրներում խաղողի տնկարկները հիմնվում են աղքատ, քարքարոտ, թեք հողատարածքներում՝ միջշարային տարածություններում խոտածածկի պարտադիր պահպանմամբ: Հնձված խոտը մնում է տեղում, պարարտանյութերը կիրառվում են մակերեսային ձևով, ինչի շնորհիվ պահպանվում է խաղողի որակը (Ю.Н. Новосадиок, 1988, А.А. Батукаев, 1999):

Նյութը և մեթոդները

Դաշտային հետազոտությունները կատարվել են 2018-

2020 թվականներին: Արմավիրի մարզի Տալվորիկ համայնքում 2008 թ. հիմնված մոտ 50 հա Կանգուն և Հաղթանակ տեխնիկական սորտերի այգում որպես միջշարային տարածություններում հողի պահպանման համակարգ կիրառվում է սև ցելը: Այգին ոռոգվում է Թալիկի ջրանցքի ջրերով՝ ակոսային եղանակով (ոռոգման նորման՝ մոտ 5000 մ³/հա): Վազերը ձմռանը թաղվում են: Վազերի ձևավորումը բազմաթև հովհարաձև է, էտը՝ ըստ վազի հզորության: Այգիներում ամենամյա պարարտացում չի կատարվում, հիմնականում կիրառվում է ամոնիակային սելիտրա (50-60 կգ/հա ազոտ նյութի հաշվով), իսկ առանձին տարիներին՝ նաև որոշակի քանակությամբ գոմաղբ:

Տնկարկներից օտարվող կենսազանգվածը հաշվառվել է կշռային մեթոդով: Բուսական նմուշների (գարնանային էտից, կանաչ հատումներից ստացված զանգված, վեգետացիայի վերջի տերևային զանգված, ողկույզի չանչ, սերմ) թաց մոխրացումը կատարվել է Գինգերդի մեթոդով, որից հետո N -ը որոշվել է միկրոկյելոլով, P_2O_5 -ը՝ Մալյուգինի և Խրենովայի մեթոդով, K_2O -ն՝ բոցային ֆոտոմետրով: Կատարվել են հողերի անալիզներ: Խումուսը որոշվել է Տյուրիկի, ընդհանուր ազոտը՝ Կյելդալի, հեշտ հիդրոլիզվող N -ը՝ Տյուրիկի և Կոնտովայի, մատչելի P_2O_5 -ը և K_2O -ն՝ Մաչիգինի, ջրային քաշվածքի չոր մնացորդը՝ կշռային մեթոդներով (Практикум по агрохимии, 1987):

Արդյունքները և վերլուծությունը

Հետազոտությունները կատարվել են ըստ հողերի գենետիկական հորիզոնների: Զանի որ տնկարկները գտնվում են միատարր հարթության վրա, ուստի դրանց կենտրոնական հատվածում կատարվել է մեկ կտրվածք: Հողերն ունեն միջին կավավազային մեխանիկական կազմ, ոռոգելի մարգագետնային գորշ տիպի են, թույլ կարբոնատային, ցեմենտացած շերտը բացակայում է, ի հորիզոնում առկա են ոչ մեծ չափի քարեր (Л.Н. Александрова, О.А. Найденова, 1976):

Ըստ աղյուսակ 1-ի՝ հողերը հարաբերականորեն հզոր են ($A+B=65$ սմ):

Աղյուսակ 1. Հողերի ֆիզիկամեխանիկական և ագրոքիմիական բնութագիրը*

Գենետիկական հորիզոնը և հզորությունը, սմ	Ֆիզիկական կավ (<0,01 մմ), %	Հումուս, %	Ընդհանուր ազոտ, %	Ջրային քաշվածքի չոր մնացորդ, %	Մատչելի սննդատարրեր, մգ (100 գ հողում)		
					N	P_2O_5	K_2O
A 0-46	35,4	1,68	0,097	0,123	3,84	2,81	53,0
B 46-65	37,2	1,52	0,073	0,138	3,61	1,73	46,0
C 65-107	38,6	1,08	0,051	0,152	2,29	1,02	48,0

*Կազմվել է հեղինակների կողմից:

Յումուսի (1,68 %) և ընդհանուր ազոտի (0,097 %) պարունակությունը վերին շերտերում բավական ցածր է, քանի որ օրգանական պարարտանյութեր քիչ են օգտագործվում, իսկ միջշարային տարածություններում որպես հողապաշտպան համակարգ է կիրառվում սև ցելը: Ջրային քաշվածքի չոր մնացորդը (հեշտ լուծվող աղերի գումարային քանակություն) բույսերի համար վտանգավոր չէ: Բացի այդ՝ մատչելի ազոտի և ֆոսֆորի պարունակությունը թույլ է, իսկ K_2O -ով ապահովվածությունը՝ լավ (ըստ Տյուրին-Կոնոնովայի և Մաչիգինի մեթոդների սանդղակի):

Ուսումնասիրված տնկարկներում խաղողի արմատները տարածվում են մինչև 1 մ: Առանձին արմատներ ավելի խորագնա են, սակայն դրանց հիմնական զանգվածը (մոտ 80-90 %) տարածված է հողի 0-60 սմ շերտերում: Տնկարկներում նոսրությունը կազմում է մոտ 15 %, սակայն բերքի և վեգետատիվ զանգվածի հաշվառմաների նպատակով ընտրվել են լիարժեք շարքեր:

Ըստ աղյուսակ 2-ի՝ Կանգուն սորտի երեք տարվա միջին բերքը կազմել է 66,9, իսկ Հաղթանակ սորտինը՝ 100,4 գ/հա, քաղցուում պարունակվում են գրեթե հավասար քանակությամբ չանչ և սերմեր:

Աղյուսակ 2. Խաղողի բերքը և վեգետատիվ զանգվածը սև ցելի պայմաններում*

Ցուցանիշներ	Խաղողի Կանգուն սորտ				Խաղողի Հաղթանակ սորտ			
	2018 թ.	2019 թ.	2020 թ.	միջինը	2018 թ.	2019 թ.	2020 թ.	միջինը
Բերքը, գ/հա, այդ թվում՝ քաղցու (պտղամաշկով), գ/հա	57,6	72,4	70,8	66,9	85,6	105,3	110,2	100,4
չանչ (օղաչոր), կգ/հա	55,7	68,7	67,6	64,0	75,3	92,6	97,4	88,4
սերմեր (օղաչոր), կգ/հա	37,2	47,5	47,3	44,0	144,6	152,5	154,3	150,5
Գարնանային ետված զանգված, կգ/հա	126,5	198,6	165,4	163,5	273,4	295,6	301,5	290,2
Կանաչ հատումների զանգված (օղաչոր), կգ/հա	1365	1285	1406	1352	1345	1310	1396	1350
Կանաչ հատումների զանգված (օղաչոր), կգ/հա	326	348	361	345	412	398	384	398
Տերևային զանգված վեգետացիայի վերջում (օղաչոր), կգ/հա	782	813	846	814	916	1043	1128	1029

Աղյուսակ 3. Խաղողի վազի տարբեր բաղադրիչներում պարունակվող հիմնական սննդատարրերը և տնկարկներից դրանց արտադրական օտարումը սև ցելի պայմաններում (2018-2020 թթ.)*

Սորտեր	Սննդատարրեր	Քանակությունը	Քաղցու (պտղամաշկով)	Չանչ (օղաչոր)	Սերմեր (օղաչոր)	Գարնանային ետից ստացված զանգված (օղաչոր)	Կանաչ հատումներից ստացված զանգված (օղաչոր)	Տերևային զանգված (օղաչոր)	Ընդամենը, կգ/հա (արտադրական օտարում)
Կանգուն	N	%	0,082	0,76	1,52	0,72	1,53	1,51	35,4
		կգ/հա	5,30	0,33	2,49	9,73	5,28	12,29	
	P_2O_5	%	0,029	0,24	0,55	0,21	0,31	0,22	8,6
		կգ/հա	1,90	0,11	0,90	2,84	1,07	1,79	
	K_2O	%	0,23	2,49	0,56	0,59	1,29	0,64	34,4
		կգ/հա	14,7	1,10	0,92	7,98	4,45	5,21	
Հաղթանակ	N	%	0,102	0,88	1,64	0,69	1,80	1,72	49,3
		կգ/հա	9,02	1,32	4,76	9,32	7,16	17,70	
	P_2O_5	%	0,038	0,28	0,65	0,21	0,49	0,31	14,7
		կգ/հա	3,36	0,42	2,91	2,84	1,95	3,19	
	K_2O	%	0,39	2,56	0,60	0,74	1,46	1,05	66,7
		կգ/հա	34,48	3,85	1,74	9,99	5,81	10,80	

*Կազմվել է հեղինակների կողմից:

Նշված սորտերից ամեն տարի հեռացվում է նաև նույն-
քան վեգետատիվ զանգված, սակայն վեգետացիայի
վերջում Հաղթանակ սորտը տերևային զանգվածով
մոտ 200 կգ-ով գերազանցում է Կանգուն սորտին:

Խաղողի ուսումնասիրված սորտերի կողմից ընդիա-
նուր N -ի, P_2O_5 -ի և K_2O -ի արտադրական օտարումը
հաշվարկելու նպատակով 2019 թ. կատարվել են բեր-
քի և վեգետատիվ զանգվածի տարբեր բաղադրիչների
լաբորատոր անալիզներ: Հաշվարկները կատարվել են
երեք տարիների միջին տվյալների հիման վրա (աղ. 3):
Հարկ է նշել, որ վեգետացիայի վերջում թեև տերևային
զանգվածը չի հեռացվում տնկարկից, այնուամենայնիվ
դրանում պարունակվող ազոտի մեծ մասը մթնոլորտ է
ներթափանցում N_2 -ի, NH_3 -ի և ազոտի օքսիդների տես-
քով, իսկ P_2O_5 -ը և K_2O -ն մնում են հողում:

Ըստ աղյուսակ 3-ի՝ Հաղթանակ սորտը գրեթե բոլոր
բաղադրիչներում առկա հիմնական սննդատարրերի
պարունակությամբ գերազանցում է Կանգուն սորտին:
Այսինքն՝ Հաղթանակ սորտի կողմից սննդատարրերի
օտարումն ավելի ինտենսիվ է:

Կանգուն սպիտակ սորտի 66,9 գ/հա բերքի և վեգե-
տատիվ զանգվածի միջոցով տնկարկից օտարվում են
35,4 կգ/հա N , 8,6 կգ/հա P_2O_5 և 34,4 կգ/հա K_2O , իսկ
Հաղթանակ սև սորտի 100,4 գ/հա բերքի և վեգետատիվ
զանգվածի միջոցով՝ 49,3 կգ/հա N , 14,7 կգ/հա P_2O_5 և
66,7 կգ/հա K_2O : Ընդհանրապես խաղողի սև սորտերն
ավելի շատ K_2O են յուրացնում, քան սպիտակ սորտերը,
ինչն ըստ երևույթին պայմանավորված է դրանց գեո-
տիպով: Հարկ է նշել, որ հողապահպանման սև ցելի
պայմաններում սննդատարրերի ոչ արտադրողական
կորուստները (լվացում և գազային արտանետումներ)
կարող են հասնել զգալի չափերի, ուստի անհրաժեշտ
է իրականացնել օրգանահանքային պարարտանյու-
թերի օպտիմալ չափաքանակներով ամենամյա պա-
րարտացում:

Եզրակացություն

Խաղողի այգիներում ամենամյա կանոնավոր պարար-
տացման բացակայության պայմաններում հնարավոր
չէ ապահովել բարձր բերք: Բացի այդ՝ սև ցելի պայ-
մաններում տեղի են ունենում սննդատարրերի զգալի
քանակությամբ ոչ արտադրական կորուստներ: Կան-
գուն սորտի 7 տ/հա բերքի և վեգետատիվ զանգվածի
դեպքում օտարվում են 35 կգ N , 9 կգ P_2O_5 և 34 կգ
 K_2O , իսկ Հաղթանակ սորտի 10 տ/հա բերքի դեպքում՝
համապատասխանաբար 49, 15 և 67 կգ:

Գրականություն

1. Հարությունյան Ս.Ս. Հողի պահպանման համա-
կարգը և հիմնական սննդատարրերի հաշվեկշիռը
Հայաստանի բազմամյա տնկարկներում // Ագրոգի-
տություն. - Եր., 1998. - Էջ 117-119:

2. Հարությունյան Ս.Ս., Հարությունյան Ա.Ֆ. Ազոտի,
ֆոսֆորի և կալիումի կենսաբանական օտարումը
Հայաստանի Վայքի մարզի խաղողի տնկարկներից
// Անդրկովկասի տարածաշրջանում ագրոպարենա-
յին համակարգի կայուն զարգացման հիմնախնդիր-
ները: Միջազգային գիտաժողով. - Եր.: ՀԳԱ, 2002.
- Էջ 298-303:
3. Հարությունյան Ս.Ս., Գրիգորյան Ա.Ս. Հիմնական
սննդատարրերի օտարումը Հայաստանի գյու-
ղացիական տնտեսությունների խաղողի այգի-
ներում // Ագրոգիտություն. - N 5-6. - Եր., 2005.
- Էջ 229-234:
4. Հարությունյան Ս.Ս., Գրիգորյան Ս.Յ. Խաղողի և
ծիրանենու հանքային սննդառության ուսումնա-
սիրությունների գնահատումը վեգետացիոն փոր-
ձերում // Ագրոգիտություն. - Եր., 2009. - N 5-6.
- Էջ 245-250:
5. Александрова Л.Н., Найденова О.А. Лабораторно-
практические занятия по почвоведению. - Л.: Колос,
1976. - С.153-158.
6. Арутюнян С.С., Арутюнян А.С. Вынос основных
элементов питания виноградом при удобрении и
орошении // Агрохимия. - N 10. - М., 1985. - С. 68-72.
7. Арутюнян С.С. Биологический вынос основных
элементов питания виноградной лозой в зависи-
мости от нормы минеральных удобрений // Труды
НИИ почвоведения и агрохимии. - Вып. XXVIII и
XXIX. - Ер., 1995. - С. 177-184.
8. Арутюнян С.С. Баланс основных элементов питания
в плодовых насаждениях Арагатской котловины
Армении // Труды НИИ почвоведения и агрохимии. -
Вып. XXVIII и XXIX. - Ер., 1995. - С. 167-177
9. Арутюнян С.С., Григорян А.М. Производственный
вынос питательных элементов в плодовых
насаждениях Котайкского марза республики
Армения // Известия ГАУА. - N 6. - Ер., 2005.
- С. 8-11.
10. Батукаев А.А. Виноградарство и виноделие Испании
// Международный сельхоз. журнал. - N 4. - 1999. -
С. 60-62.
11. Бондаренко С.Г. Удобрение виноградников
Молдавии. - Кишинев, 1986. - 232 с.
12. Донос А.И. Баланс элементов питания в обык-
новенном черноземе при систематическом приме-
нении удобрений // Эффективность использования
удобрений в земледелии Молдавии. - Кишинев,
1988. - С. 97-107.
13. Малахова Н.П. Вынос элементов минерального
питания виноградным растением в условиях
светлокаштановых почв юговостока Казахстана // Агрохимия. - N 10. - М., 1980. - С. 100-106.

14. Маринчик А.Ф., Захарова В.В. Вынос питательных элементов растениями сахарной свеклы с учетом отмерших листьев в зависимости от минерального питания // Вестник с.-х. науки. - N 5. - 1987. - С. 64-68.
15. Мерджаниан А.С. Виноградарство. - М.: Пищепромиздат, 1951. - 455 с.
16. Новосадюк Ю.Н. Влияние различных сельскохозяйственных растений на виноград // Биология винограда и разработка элементов прогресс технологии его размножения и возделывания. - Кишинев, 1988. - С. 3-38.
17. Петербургский А.В. Круговорот и баланс питательных веществ в земледелии АН. - М.: Наука, 1979. - С. 3-155.
18. Практикум по агрохимии / Под ред. Б.А. Ягодина. - М.: Агропромиздат, 1987. - С. 122-130, 267-308, 501.
19. Серпуховитина К.А. Удобрение и продуктивность винограда. - Краснодар, 1982. - С. 3-174.
20. Уэльский В.М., Конаныхина О.Н. Вынос питательных веществ виноградным растением на песчаной среднегумусированной почве // Повышение эффективности винограда. - Новочеркасск, 1983. - С. 59-62.
21. Asmus, F. Gozlit, H., Hübner, C. (1988). Nährstoffzug Von Cetreide auf Diluvialen Böden. "Arch. Acker und Pflanzenbow und Boderk". 32, - N 1, - pp. 49-56.

Производственный вынос азота, фосфора и калия из насаждений винограда в системе сохранения почвы «черный пар»

С.С. Арутюнян, Л.Г. Матевосян

Научный центр земледелия

Ключевые слова: виноград, сорт, основные питательные вещества, производственный вынос, черный пар

Аннотация. На виноградных насаждениях сортов Кангун и Ахтанак села Талворик Армавирской области в 2018-2020 гг. был изучен производственный вынос основных питательных элементов в системе сохранения почвы «черный пар».

Исследования показали, что при урожае в 7 т/га и соответствующей вегетативной массе сорта Кангун вынос N составил 35 кг, P_2O_5 - 9 кг и K_2O - 34 кг, а у сорта Ахтанак при 10 т/га урожай и эквивалентной вегетативной массой соответственно - 49, 15 и 67 кг. Однако, надо учитывать также, что в условиях «чёрного пара» происходят значительные непроизводственные потери питательных элементов, которые необходимо учитывать при определении доз удобрений.

Industrial Extraction of Nitrogen, Phosphorus and Potassium from Vineyards in the Bare Fallow System of Soil Conservation

S.S. Harutyunyan, L.G. Matevosyan

Scientific Center of Agriculture

Keywords: grape, variety, primary nutrients, industrial extraction, bare fallow

Abstract. In 2018-2020 the industrial extraction of primary nutrients from the vineyards of grape varieties "Kangun" and "Haghtanak" cultivated in the Talvorik community of Armavir region was investigated in conditions of bare fallow system of soil conservation. According to the investigations, in case of 7 t/ha yield and vegetative mass of the "Kangun" variety, 35 kg N , 9 kg P_2O_5 and 34 kg K_2O is extracted, while in case of 10 t/ha yield and vegetative mass of the "Haghtanak" variety 49 kg, 15 kg and 67 kg respective nutrients are discharged.

In bare fallow conditions non-industrial nutrient losses are also recorded, which should be considered when determining the doses of fertilizers.

*Ընդունվել է՝ 05.05.2021 թ.
Գրախոսվել է՝ 27.05.2021 թ.*



ԱԳՐՈՂԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Հայաստանի ագգային ագրարային համալսարան

AGRICULTURE AND TECHNOLOGY

АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ

Միջազգային գիտական
պարբերական

ISSN 2579-2822



Կայքէջ՝ anau.am/scientific-journal

doi:

ՀՏԴ 635.649:631.544.4

ՏԱԶԴԵՂԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ԷՆՏՈՄՈԿԱՐԻՖԱՈՒՆԱՆ ԶԵՐՄԱՏԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Մ.Յ. Ղազարյան

Հայաստանի ագգային ագրարային համալսարան

maga-ghazaryan@mail.ru

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Բանալի բառեր՝

տաքդեղ,
ջերմատուռ,
Էնտոմոակարիֆաունա,
նույնականացում,
հետազոտություն

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Հոդվածում ներկայացված են 2019-2020 թվականներին Արմավիրի մարզի տարբեր համայնքների ջերմատուռային տնտեսություններում իրականացված հետազոտությունների արդյունքները: Տաքդեղի վնասակար և օգտակար Էնտոմոակարիֆաունայի բացահայտման ընթացքում գրանցվել ու նույնականացվել են վնասատուների 17 և օգտակար միջատների 11 տեսակներ:

Օգտակար միջատներից 2-ը՝ *Cryptolaemus montrouzieri*-ն և *Euplectrus* ցեղը, Հայաստանում գրանցվել են առաջին անգամ:

Նախաբան

Տաքդեղը բանջարային մշակաբույս է, դիետիկ սննդի կարևոր բաղադրիչ: Այն բանջարեղենի մյուս տեսակների համեմատությամբ C վիտամինի բարձր պարունակությամբ գրավում է առաջին տեղը (100 գ կանաչ տաքդեղում՝ 150 մգ, 100 գ կարմիր տաքդեղում՝ 250 մգ կամ օրական չափաբաժնի 250 %): Միաժամանակ 6 անգամ ավելի շատ C վիտամին է պարունակում, քան ցիտրուսայինները:

Վերջին 20-25 տարիների ընթացքում Հայաստանում տաքդեղի վնասատուների վերաբերյալ գիտական հետազոտություններ չեն կատարվել: Հարկ է նշել, որ տաքդեղը, ինչպես և մորմազգի բանջարային մյուս մշակաբույսերը, զգալիորեն վնասվում են բազմաթիվ վնասակար օրգանիզմների կողմից:

Նյութը և մեթոդները

Հետազոտություններն իրականացվել են 2019-2020 թվականներին Արմավիրի մարզի Առատաշեն, Արշա-

լույս, Խորոնք, Տարոնիկ, Ապագա, Լուսառատ, Ակնալիճ, Ակնաշեն, Գրիբոյեդով համայնքների ջերմատուռային տնտեսություններում: Հետազոտության նպատակն է եղել ուսումնասիրել տաքդեղի վնասակար և օգտակար Էնտոմոակարիֆաունան ջերմատան պայմաններում: Երթուղային հետազոտություններն իրականացվել են շաբաթական 1-2 անգամ, որոնց ընթացքում վնասատուները և օգտակար միջատները հավաքվել ու ֆիքսվել են ըստ միջատաբանությունում ընդունված մեթոդների (Прогноз появления и учет вредителей и болезней сельскохозяйственных культур, 1958): Հայտնաբերված Էնտոմոակարիֆաունայի նույնականացումը կատարվել է Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության, Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնների մասնագետների օգնությամբ՝ միջատաբանության բնագավառում ընդունված մեթոդներով:

Արդյունքները և վերլուծությունը

2019-2020 թթ. իրականացված երթուղային հետազո-

տուրթյունների ընթացքում հայտնաբերվել ու նույնակա-
նացվել են վնասատուների 17 և օգտակար միջատների
11 տեսակներ: Ընդ որում՝ օգտակար միջատների երկու
տեսակները (*Cryptolaemus montrouzieri* և *Euplectrus*)
գրանցվել են առաջին անգամ:

Նույնականացվել են վնասատուների հետևյալ տեսակ-
ները.

1. Բամբակենու կնգուղակեր - *Helicoverpa armigera* (<https://www.cabi.org>):
2. Կարադրիսա - *Spodoptera exigua* (<https://kubsau.ru>):
3. Լուլիկի հարավամերիկյան ցեց - *Tuta absoluta* (<https://www.cabi.org>):
4. Բանջարանոցային բվիկ - *Lacanobia oleracea* (<http://www.wildlifeinsight.com>):
5. Դեղձենու լվիճ - *Myzodes persicae* (Определитель насекомых Европейской части СССР, 1964):
6. Բոստանային լվիճ - *Aphis gossypii* (Определитель насекомых Европейской части СССР, 1964):
7. Ջերմատնային սպիտակաթևիկ - *Trialeurodes vaporariorum* (Определитель насекомых европейской части СССР, 1964):
8. *Balclutha impicta* (<https://bugguide.net>):

9. Կարտոֆիլի ցիկադ - *Empoasca fabae* (<https://en.wikipedia.org>):

10. Լուլիկի տերևային ականոդ - *Liriomyza sativae* (<https://www.cabi.org>):

11. Ծլածանձ - *Delia platura* (Պ.Մ. Копанева, 1981):

12. Ծխախոտի թրիպս - *Thrips tabaci* (Պ.Մ. Копанева, 1981):

13. Արևմտյան ծաղկային թրիպս - *Frankliniella occidentalis* (<https://www.ivami.com>):

14. Սովորական արջուկ - *Gryllotalpa-gryllotalpa* (<https://kubsau.ru>):

15. Դաշտային կուրամլուկ - *Lygus pratensis* (Պ.Մ. Копанева, 1981):

16. Սովորական ոստայնատիզ - *Tetranychus urticae* (Պ.Մ. Копанева, 1981):

17. Բուսակեր կողինջներ - *Limacidae* (Հայաստանի գյուղատնտեսական կուլտուրաների, անտառների և պահեստների վնասատուները, 1976):

Նույնականացված տեսակների լուսանկարները ներ-
կայացված են նկար 1-ում:

Աղյուսակ 1-ում ներկայացված են ջերմատնային պայ-
մաններում տաքդեղի վրա վնասակար օրգանիզմների
հայտնաբերման տարեթվերը և վնասված օրգանները:

Աղյուսակ 1. Վնասակար էնտոմոֆագիայի ֆաունայի տեսակային կազմը տաքդեղի վրա*


Հ/հ	Վնասատուներ	Հայտնաբերման տարեթիվը	Բույսի վնասված օրգանները
1	Բամբակենու կնգուղակեր	2019, 2020	Տերև, պտուղ
2	Կարադրիսա	2019	Տերև, պտուղ
3	Լուլիկի հարավամերիկյան ցեց	2019, 2020	Տերև
4	Բանջարանոցային բվիկ	2019	Տերև
5	Դեղձենու լվիճ	2019, 2020	Տերև, ծաղիկ, պտուղ
6	Բոստանային լվիճ	2019, 2020	Տերև, ծաղիկ, պտուղ
7	Ջերմատնային սպիտակաթևիկ	2019, 2020	Տերև, ծաղիկ, պտուղ
8	<i>Balclutha impicta</i>	2020	Տերև
9	Կարտոֆիլի ցիկադ	2019, 2020	Տերև
10	Լուլիկի տերևային ականոդ	2019, 2020	Տերև
11	Ծլածանձ	2019, 2020	Պտուղ
12	Ծխախոտի թրիպս	2019, 2020	Տերև, ծաղիկ, պտուղ
13	Արևմտյան ծաղկային թրիպս	2019, 2020	Տերև, ծաղիկ, պտուղ
14	Սովորական արջուկ	2019, 2020	Արմատ
15	Դաշտային կուրամլուկ	2019	Տերև
16	Սովորական ոստայնատիզ	2019, 2020	Տերև, ծաղիկ, պտուղ
17	Բուսակեր կողինջներ	2019	Տերև, պտուղ

*Կազմվել է հեղինակի կողմից:



Նկ. 1. Տաքդեղի վնասակար էնտոմոակարիֆաունայի ջերմատան պայմաններում:

1 - սովորական ոստայնատիզ, 2 - դեղձենու լվիճ, 3 - բոստանային լվիճ, 4 - *Balclutha impicta*, 5 - կարտոֆիլի ցիկադ, 6 - արևմտյան ծաղկային թրիպս, 7 - ծխախոտի թրիպս, 8 - լոլիկի տերևային ականոդ, 9 - ծլածանձ, 10 - բամբակենու կնգուղակեր, 11 - կարագրիկ, 12 - լոլիկի հարավամերիկյան ցեց, 13 - բանջարանոցային բվիկ, 14 - ջերմատնային սպիտակաթևիկ, 15 - դաշտային կուրամուկ, 16 - սովորական արջուկ, 17 - մերկ կողիչ (լուսանկարումը կատարվել է հեղինակի կողմից):



Նկ. 2. Տաքդեղի օգտակար էնտոմոակարիֆաունայի ջերմատան պայմաններում:

1 - յոթկետանի գատկաբզեզ, 2 - *Harmonia axyridis*, 3 - *Coccinella magnifica*, 4 - փոփոխական գատկաբզեզ, 5 - երկկետանի գատկաբզեզ, 6 - *Cryptolaemus montrouzieri*, 7 - *Aphidius colemani*, 8 - *Euplectrus* sp., 10 - սովորական ոսկեաչիկ, 11 - աղոթարար սովորական (լուսանկարումը կատարվել է հեղինակի կողմից), 9 - *Amblyseius finlandicus* (<https://www.biolib.cz>):

Նույնականացվել են օգտակար միջատների հետևյալ տեսակները:

1. Փոփոխական գատկաբզեզ - *Hippodamia variegata* (Определитель насекомых европейской части СССР, 1965):
2. Յոթկետանի գատկաբզեզ - *Coccinella septempunctata* (Определитель насекомых европейской части СССР, 1965):
3. Երկկետանի գատկաբզեզ - *Adalia bipunctata* f. *sevpustulata* (Определитель насекомых европейской части СССР, 1965):
4. *Coccinella magnifica* (<https://influentialpoints.com>):
5. *Harmonia axyridis* (<https://influentialpoints.com>):
6. *Cryptolaemus montrouzieri* (<https://influentialpoints.com>):

7. Սովորական ոսկեաչիկ - *Chrysoperla carnea* (Определитель насекомых европейской части СССР, 1987):

8. *Aphidius colemani* (<https://www6.inrae.fr>):

9. *Euplectrus* sp. (Определитель насекомых европейской части СССР, 1981):

10. Աղոթարար սովորական - *Mantis religiosa* (<https://bugguide.net>):

11. *Amblyseius finlandicus* (<https://www1.montpellier.inra.fr>):

Cryptolaemus montrouzieri տեսակը և *Euplectrus* ցեղը Հայաստանում գրանցվել են առաջին անգամ: *Cryptolaemus montrouzieri*-ը սկսվում է լվիճներով, իսկ *Euplectrus* ցեղի ներկայացուցիչները տաքդեղի գլխավոր վնասատուներ բամբակենու կնգուղակերի և կարագրիկայի արտաքին մակաբույծներ են:

Աղյուսակ 2. Օգտակար էնտոմոակարիֆաունայի տեսակային կազմը տաքդեղի վրա*

Զ/հ	Էնտոմոակարիֆագեր	Հայտնաբերման տարեթիվը	Փոխհարաբերության տեսակը	Վնասված օրգանիզմները
1	Փոփոխական զատկաբզեզ	2019, 2020	Գիշատիչ	Լվիճներ
2	Յոթկետանի զատկաբզեզ	2019, 2020	Գիշատիչ	Լվիճներ
3	Երկկետանի զատկաբզեզ	2019, 2020	Գիշատիչ	Լվիճներ
4	<i>Coccinella magnifica</i>	2020	Գիշատիչ	Լվիճներ
5	<i>Harmonia axyridis</i>	2019	Գիշատիչ	Լվիճներ
6	<i>Cryptolaemus montrouzieri</i>	2020	Գիշատիչ	Լվիճներ
7	Սովորական ոսկեաչիկ	2019, 2020	Գիշատիչ	Լվիճներ, թրիպսներ, ջերմատնային սպիտակաթևիկ
8	<i>Aphidius colemani</i>	2019, 2020	Մակաբույծ	Լվիճներ
9	<i>Euplectrus</i> sp.	2019, 2020	Մակաբույծ	Բամբակենու կնգուղակեր, կարադրինա
10	Աղոթարար սովորական	2019	Գիշատիչ	Կարադրինայի թրթուր, մլուկներ
11	<i>Amblyseius finlandicus</i>	2020	Գիշատիչ	Սովորական ոստայնատիզ

*Կազմվել է հեղինակի կողմից:

Նույնականացված տեսակների լուսանկարները ներկայացված են նկար 2-ում:

Աղյուսակ 2-ում ներկայացված է ջերմատն ալայմաններում օգտակար էնտոմոակարիֆաունայի հայտնաբերման տարեթիվը, փոխհարաբերության տեսակը և վնասվող օրգանիզմը:

Եզրակացություն

Այսպիսով՝ Արմավիրի մարզի տարբեր համայնքների ջերմատնային տնտեսություններում իրականացված հետազոտությունների արդյունքում գրանցվել ու նույնականացվել են վնասակար և օգտակար էնտոմոակարիֆաունայի 17 և 11 տեսակներ: Վնասակարներից 4-ը պատկանել են թեփուկաթևավորների (*Lepidoptera*), 5-ը՝ հավասարաթևավորների (*Homoptera*), 2-ը՝ երկթևերի (*Diptera*), 2-ը՝ ծոպաթևավորների (*Thysanoptera*) կարգերին և մեկական ներկայացուցիչ՝ ուղղաթևավորների (*Orthoptera*), կիսակարծրաթևավորների (*Hemiptera*) կարգերին ու սարդակերպերի (*Arachnida*), փորոտանիների (*Gastropoda*) դասերին: Օգտակար էնտոմոֆաունայից 6-ը պատկանել են կարծրաթևավորների (*Coleoptera*), 2-ը՝ թաղանթաթևավորների (*Hymenoptera*) կարգերին, իսկ մեկական ներկայացուցիչ՝ ցանցաթևավորների (*Neuroptera*), աղոթարարների (*Mantodea*) և տզերի կարգերին (*Acarina*): Կարծրաթևավորների կարգից *Cryptolaemus montrouzieri* տեսակը և թաղանթաթևավորների կարգից *Euplectrus* ցեղը Հայաստանում գրանցվել են առաջին անգամ:

Գրականություն

1. Հայաստանի գյուղատնտեսական կուլտուրաների, անտառների և պահեստների վնասատուները. - Եր., 1976:
2. Копанева Л.М. Определитель вредных и полезных насекомых и клещей технических культур в СССР. - Л., 1981.
3. Определитель насекомых европейской части СССР. В пяти томах. - Л.: Наука, 1964.
4. Определитель насекомых европейской части СССР. - Том 2: Жесткокрылые (Coleoptera) и веерокрылые. - Л.: Наука, 1965.
5. Определитель насекомых европейской части СССР. - Том 3: Перепончатокрылые. - Л.: Наука, 1981.
6. Определитель насекомых европейской части СССР. - Том 4. - Ч. 6. Большекрылые. Верблюбки. Сетчатокрылые. Скорпионовые мухи. Ручейники. - Л.: Наука, 1987.
7. Прогноз появления и учет вредителей и болезней сельскохозяйственных культур / Под ред. В.В. Косова, И.Я. Полякова. - М., 1958.
8. <https://www.biolib.cz/en/taxon/id76253/>: *Species Euseius finlandicus* (Oudemans, 1915) (դիտվել է՝ 10.08.2021 թ.).
9. <https://bugguide.net/node/view/18669>: *Species Balchutha impicta* (դիտվել է՝ 31.07.2021 թ.):

10. <https://bugguide.net/node/view/22947>: *Species Mantis religiosa* - European Mantis (դիտվել է՝ 02.08.2021 թ.).
11. <https://www.cabi.org/isc/datasheet/30960>: *Liriomyza sativae* (vegetable leaf miner) (դիտվել է՝ 12.08.2021 թ.).
12. <https://www.cabi.org/isc/datasheet/49260>: *Phthorimaea absoluta* (tomato leafminer) (դիտվել է՝ 10.07.2021 թ.).
13. https://en.wikipedia.org/wiki/Empoasca_fabae: *Empoasca fabae*: From Wikipedia, the free encyclopedia (դիտվել է՝ 27.07.2021 թ.).
14. https://influentialpoints.com/biocontrol/Coccinella_magnifica_scarce_seven-spot_ladybird.htm: *Aphid Predator (Coleoptera: Coccinellidae). Coccinella magnifica: Scarce seven-spot Ladybird* (դիտվել է՝ 30.07.2021 թ.).
15. https://influentialpoints.com/biocontrol/Cryptolaemus_montrouzieri_mealybug_ladybird.htm: *Mealybug Predator (Coleoptera: Coccinellidae). Cryptolaemus montrouzieri: Mealybug ladybird, Mealybug destroyer* (դիտվել է՝ 30.06.2021 թ.).
16. https://influentialpoints.com/biocontrol/Harmonia_axyridis_harlequin_ladybird.htm: *Aphid Predator (Coleoptera: Coccinellidae) Harmonia axyridis: Harlequin ladybird* (դիտվել է՝ 22.08.2021 թ.).
17. <http://www.irtek.am/views/act.aspx?aid=102533>: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին, n 1612-Լ, 14 նոյեմբերի 2019 թ. (դիտվել է՝ 09.08.2021 թ.):
18. <https://kubsau.ru/upload/iblock/f1b/f1bdaae47f24aa57e457b69962df5804.pdf>: Пикушова Э.А., Анцупова Т.Е., Девяткин А.М. Определитель вредителей сельскохозяйственных культур по повреждениям растений для юга России (դիտվել է՝ 17.08.2021 թ.).
19. https://www6.inrae.fr/encyclopedie-pucerons_eng/Species/Parasitoids/Braconidae-Aphidiinae/Aphidius-colemani: *Aphidius colemani Viereck 1912* (դիտվել է՝ 19.08.2021 թ.).
20. https://www1.montpellier.inra.fr/CBGP/acarologia/export_pdf.php?id=2295&typefile=1: *Acarologia* (դիտվել է՝ 06.08.2021 թ.).

Вредная и полезная энтомоакарифауна перца в условиях теплицы

М.Г. Казарян

Национальный аграрный университет Армении

Ключевые слова: перец, теплица, энтомоакарифауна, идентификация, исследование

Аннотация. В статье представлены результаты исследований, проведенных в тепличных хозяйствах различных сообществ Армавирской области в 2019-2020 годах. В ходе выявления вредной и полезной энтомоакарифауны перца было зарегистрировано и идентифицировано 17 видов вредных и 11 видов полезных насекомых.

2 вида полезных насекомых, *Cryptolaemus montrouzieri* и род *Euplectrus*, в Армении были зарегистрированы впервые.

Harmful and Useful Entomoacarifauna of Pepper in Grenhouse Conditions

M.H. Ghazaryan

Armenian National Agrarian University

Keywords: pepper, greenhouse, entomoacarifauna, identification, research

Abstract. The article considers the research results conducted within the period of 2019-2020 in the greenhouse farms of different communities in Armavir region. During the detection of harmful and useful pepper entomoacarifauna, 17 pests and 11 useful insect species were recorded and identified.

Among the useful insects, two genera - *Cryptolaemus montrouzieri* and *Euplectrus* - have been recorded for the first time in Armenia.

Ընդունվել է՝ 31.08.2021 թ.
Գրախոսվել է՝ 03.09.2021 թ.



ՔՏԴ 630*17:582.475.4

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍՈՍՈՒ ՏՆԿԻՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑՕԹՅԱ ՀԻԴՐՈԴՈՆԻԿԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Խ.Ս. Մայրապետյան *կ.գ.թ.*, Ա.Յ. Հովսեփյան *կ.գ.թ.*, Ա.Ս. Եղիազարյան, Ա.Ա. Հակոբջանյան *կ.գ.թ.*

ՀՀ ԳԱԱ Գ.Ս. Դավթյանի անվան հիդրոդոնիկայի պրոբլեմների ինստիտուտ

mairap12@mail.ru, annaeghiazaryan64@mail.ru, ahakobjanian@gmail.com

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Բանալի բառեր՝

սոսի,
տնկանյութ,
հիդրոդոնիկա,
սննդարար լուծույթ,
արդյունավետություն

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Երկարամյա փորձերն իրականացվել են Գ.Ս. Դավթյանի անվան հիդրոդոնիկայի պրոբլեմների ինստիտուտի փորձարարական կայանում (Արարատյան հարթավայր) և Դիլիջանի անտառային գոտու հիդրոդոնիկ պայմաններում: Մշակվել է արևելյան սոսու տնկիների անհող աճեցման կենսատեխնոլոգիա:

Արարատյան հարթավայրում տնկիներն աճով 2,0-2,3 անգամ գերազանցել են Դիլիջանի անտառային գոտում աճեցված տնկիներին: Սոսու տնկիների հիդրոդոնիկ արտադրության՝ մեր կողմից մշակված կենսատեխնոլոգիան արդյունավետ է և հեռանկարային: Առաջարկվում է այն կիրառել տնկիների արագացված մեծաքանակ արտադրություն կազմակերպելու համար:

Նախաբան

Չոր կլիմա ունեցող երկրներում, այդ թվում՝ Հայաստանում գերակա խնդիր է բնության պահպանությունը (Լ.Վ. Հարությունյան, Ս.Լ. Հարությունյան, 1986, Ժ.Յ. Վարդանյան, 2005):

Ներկայումս Հայաստանում, օդի աղտոտվածության աճով և բնության պահպանության հրատապ խնդիրներով պայմանավորված, կարևորվում են քաղաքային այգիների հիմնումն ու քաղաքամերձ տարածքների ձևավորումը: Տարեցտարի ավելանում է հատկապես ծառաթփատեսակների տնկիների պահանջարկը, և ավելի ու ավելի է կարևորվում դրանց արտադրության ժամանակակից եղանակների կիրառումը: Լայնորեն տարածված է բույսերի անհող մշակությունը, որը հնարավորություն է տալիս կարճ ժամանակահատվածում (2-3 տարում) կազմակերպել տնկանյութի արագաց-

ված արտադրություն (Ա.Յ. Հովսեփյան և ուրիշ., 2013, Դ.Ս. Դավթյան, 1980, Ս.Մ. Մայրապետյան, 1989): Ընդ որում՝ վերջինս կարող է եապես նպաստել հանրապետության նոսրացած անտառների, այգիների, կանաչ պուրակների վերականգնմանը և նոր տարածքների կանաչապատմանը:

Սոսին (*Platanus L.*) բուսական աշխարհի հսկաներից է. բարձրությունը հասնում է մինչև 50 մ: Այն տարածված է Հյուսիսային Ամերիկայում, միջերկրծովյան ավազանում, Մերձավոր Արևելքում, Հայկական բարձրավանդակում:

ՀՀ Սյունիքի մարզի Ծավ գյուղի մոտ է գտնվում Հայաստանի խոշոր սոսիների միակ պուրակը, որը ներկայումս արգելոց է և զբաղեցնում է 60 հա տարածություն (Լ.Վ. Հարությունյան, Ս.Լ. Հարությունյան, 1985, Ա.Յ. Հովսեփյան և ուրիշ., 2013, Ժ.Յ. Վարդանյան, 2005,

А.А. Григорян, 1973): Ուշագրավ է, որ Հայաստանի հնագույն մայրաքաղաք Արմավիրում գտնվող Անահիտ աստվածուհու մեծիանը շրջապատված է եղել հռչակավոր Սոսյաց անտառով:

Երիտասարդ սոսին արագ է աճում և մի քանի տասնամյակի ընթացքում հասնում է հսկայական չափերի:

Հարկ է նշել, որ բնական պայմաններում սոսին լավ է աճում այլովիալ հողերում. տարածված է գետահովիտներում, լճերի ափերին և կիրճերի խորքերում: Հզոր, խորագնա, խիտ ճյուղավորված, առանցքային արմատային համակարգի շնորհիվ դիմանում է ժամանակավոր երաշտին: Բավական ցրտադիմացկուն է. կայուն է մինչև -25°C սառնամանիքին: Հայաստանի պայմաններում լավ է աճում ծովի մակերևույթից մինչև 1400 մ բարձրության վրա. ավելի բարձրադիր գոտիներում ամբողջովին ցրտահարվում է:

Որպես հզոր, լայնասաղարթ, գեղեցիկ և երկարակյաց ծառատեսակ՝ սոսին լայնորեն կիրառվում է դեկորատիվ պարտեզագործությունում և բնակավայրերը կանաչապատելիս: Հայաստանում այն կանաչապատման նպատակով օգտագործվող հիմնական ծառատեսակներից է, քանի որ լավ է հարմարվում քաղաքի էկոլոգիական պայմաններին (գազերի, ծխի, փոշու առկայություն և այլ գործոններ):

Սոսին բազմանում է սերմերով, անդալիսով, ինչպես նաև կտրոնավորմամբ (Լ.Վ. Հարությունյան, Ս.Լ. Հարությունյան, 1985, Լ.Վ. Հարությունյան, Ս.Լ. Հարությունյան, 1986, Ժ.Հ. Վարդանյան, 2005):

Հայտնի է սոսու շուրջ 10 տեսակ: Հայաստանում մշակվում է սոսու երեք տեսակ՝ սոսի արևելյան (*P. orientalis* L.), սոսի արևմտյան (*P. occidentalis* L.) և սոսի հիբրիդային (*P. hybrid* կամ *P. accrifolia*): Վերջինս նախորդ երկու տեսակների հիբրիդն է (Լ.Վ. Հարությունյան,

Ս.Լ. Հարությունյան, 1985, Ժ.Հ. Վարդանյան, 2005): Հետազոտությունների համար ընտրվել է արևելյան սոսին:

Նյութը և մեթոդները

Արևելյան սոսին (*Platanus orientalis* L.) սոսագգինների (*Platanaceae* Lindl) ընտանիքի ծառատեսակ է: Այն բազմացվում է սերմերով: Ի տարբերություն մյուս ծառատեսակների՝ ինչպես կտրոնները, այնպես էլ սերմերը մթերվում են երկրորդ տարվա ճյուղերից և սերմերից:

Գիտափորձերը կատարվել են 2011-2019 թթ. ՀՀ ԳԱԱ Գ.Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտում: Որպես լցանյութ օգտագործվել են 3-15 մմ մասնիկներով հրաբխային սև և կարմիր խարամ, գլաքար:

Սոսու սերմերի ցանքը կատարվել է գարնանը՝ մարտ-ապրիլ ամիսներին: Ծլունակությունը բարձրացնելու նպատակով ցանքից առաջ սերմերը 1 օր թրջվել են ջրով: Սև խարամում 10-15 սմ հեռավորությամբ բացված 2-3 սմ խորությամբ ակոսներում լցվել է գետի ավազ: Սերմերը ցանվել են խիտ (քանի որ սերմերի ծլունակությունը ցածր է) և ծածկվել ավազի բարակ շերտով: Մինչև ծլելը՝ 15-18 օրվա ընթացքում, լցանյութն անընդհատ խոնավացվել է:

Առաջին տարում միավոր մակերեսի հաշվով հրաբխային սև խարամում ստացվել է 53 սմ բարձրությամբ և բնի 3 մմ տրամագծով 250-300 սերմնաբույս (սկ. 1): Գարնանը բուսակներն Արարատյան հարթավայրի հրաբխային սև, կարմիր խարամում, գլաքարում և Դիլիջանի անտառային գոտու հրաբխային կարմիր խարամում տնկվել են 20 բուսակ/մ² սխեմայով՝ լաստակների վրա: Կաշողականությունը Դիլիջանի անտառային գոտում կազմել է 100 %, իսկ Արարատյան հարթավայրում՝ 93-98 % (աղ. 1):

Աղյուսակ 1. Արևելյան սոսու սերմնաբույսերի ծառաչափական ցուցանիշները կլիմայական տարբեր գոտիների բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում*

Լցանյութեր	Բուսակների ծառաչափական ցուցանիշները								Տնկիների ելք, հատ/մ²
	տնկման խտությունը, հատ/մ²	կաշողականությունը, %	բարձրությունը, սմ	բնի տրամագիծը, մմ	1-ին տարի		տարեկան միջին աճը		
					բարձրությունը, սմ	բնի տրամագիծը, մմ	բարձրությունը, սմ	բնի տրամագիծը, մմ	
Հրաբխային սև խարամ	20	98	53,0	3,0	203,6	23,6	150,6	20,6	19,6
Հրաբխային կարմիր խարամ	20	95	53,0	3,0	215,6	25,0	162,6	22,0	19,0
Գլաքար	20	93	53,0	3,0	217,2	23,6	164,2	20,6	18,6
Դիլիջանի անտառային գոտի, կարմիր խարամ	20	100	53,0	3,0	104,0	6,7	51,0	3,7	20,0

*Կազմվել է հեղինակների կողմից՝ փորձարարական տվյալների հիման վրա:



Նկ. 1. Սոսու բուսակների ընդհանուր տեսքը բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում:

Ուսումնասիրվել է տարբեր գործոնների (լցանյութ, սննդարար լուծույթ, սնման մակերես, հիմնական սննդատարրերի խտություն) ազդեցությունը սերմնաբույսերի կաչողականության, աճման դինամիկայի, ինչպես նաև տնկիների աճի, ելի և որակի վրա: Միաժամանակ մշակվել է սոսու անհող արտադրության կենսատեխնոլոգիա:

Հարկ է նշել, որ կարևորվում են բույսերի տնկման խտությունը և ճիշտ փոխադասավորվածությունը, քանի որ դրանցով են հիմնականում պայմանավորված միավոր արտադրանքի հաշվով կատարված ծախսերը: Անհող մշակության շնորհիվ կրճատվում են մի շարք գյուղատնտեսական աշխատանքներ (փխրեցում, սնուցում, քաղիան, ջրում և այլն), ինչը հնարավորություն է տալիս սոսու տնկարկի խտությունը մեծացնել 4-5 անգամ՝ միաժամանակ կրճատելով նաև տնկիների արտադրության ժամկետը (1-2 տարով) և ծախսերը (2-3 անգամ), ապահովելով վերգետնյա և ստորգետնյա օրգանների լուսաօդային ու ջրասնդային օպտիմալ պայմաններ (Լ.Վ. Հարությունյան, Ս.Լ. Հարությունյան, 1986, Գ.Շ. Դավթյան, 1980):

Վեգետացիայի ընթացքում ամեն ամիս կատարվել են փորձի բոլոր տարբերակների ֆենոլոգիական դիտարկումներ և կենսաչափումներ: Մինչև վեգետացիայի ավարտը բույսերը սնուցվել են Գ.Ս. Դավթյանի կողմից առաջարկված լուծույթով (Գ.Շ. Դավթյան, 1980). գարնանը և ամռանը՝ օրական 1-2, իսկ աշնանը՝ 1 անգամ:

Տնկիների ճյուղերի փայտացման նպատակով, սեպտեմբերից սկսած, սննդարար լուծույթից ամբողջությամբ հանվել է ազոտը, այնուհետև աստիճանաբար

կրճատվել է սնուցման (ջրման) հաճախականությունը, ինչը նպաստել է նաև տնկիների ցրտադիմացկունության բարձրացմանը (Ա.Հ. Հովսեփյան և ուրիշ., 2013):

Արդյունքները և վերլուծությունը

Արարատյան հարթավայրի և Դիլիջանի անտառային գոտու բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում սոսու բուսակների աճեցման առաջին տարվա ցուցանիշները ներկայացված են աղյուսակներ 1, 2-ում:

Ըստ հետազոտության արդյունքների՝ Արարատյան հարթավայրում սոսու տնկիների աճի համար նպաստավոր են կարմիր հրաբխային խարամը և գլաքարը: Տնկիների բարձրությունը համապատասխանաբար կազմել է 215,6 և 217,2 սմ, բնի տրամագիծը՝ 25,0 և 23,6 մմ:

Դիլիջանի անտառային գոտու պայմաններում աճեցված սոսու բուսակների տարեկան միջին բարձրությունը կազմել է 104 սմ, բնի տրամագիծը՝ 6,7 մմ (նկ. 2-4):

Ամսական աճի առավելագույն ցուցանիշներ գրանցվել են օգոստոս-սեպտեմբեր ամիսներին. Արարատյան հարթավայրում՝ 41,3-62,8 սմ, Դիլիջանի անտառային գոտու պայմաններում՝ 8,9-11,6 սմ (աղ. 2, նկ. 3):

Ըստ աղյուսակ 1-ի՝ փորձարկված լցանյութերով և աճի ինտենսիվությամբ պայմանավորված՝ տարբերությունը զգալի չէ (203,6-23,6, 215,6-25,0, 217,2-23,6 մմ), ինչը հիդրոպոնիկայի առավելություններից է: Տարբերություն նկատվում է տնկիները հողագրունտ տեղափոխելուց հետո:

Հրաբխային սև և կարմիր խարամում աճեցված տնկիների արմատային համակարգն ավելի զարգացած է, լցանյութի մանր մասնիկները գրեթե ամբողջությամբ միաձուլվում են արմատային համակարգին, ինչի շնորհիվ վերատնկման ժամանակ ապահովվում են 95-100 % կաչողականություն: Արարատյան հարթավայրի բնակլիմայական պայմաններում տնկիներն աճով 2,0-2,3 անգամ գերազանցում են անտառային գոտու տնկիներին, ինչը պայմանավորված է հատկապես բարձր ջերմաստիճանով և հզոր արմատային համակարգի ձևավորմամբ (նկ. 4):

Ըստ հետազոտությունների՝ Արարատյան հարթավայրի բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում սոսու բուսակներից առաջին տարում հնարավոր է 1 մ² մակերեսից ստանալ ստանդարտին համապատասխանող և զարգացած արմատային համակարգով (նկ. 4) 18-19 տնկի (աղ. 1):

Այսպիսով՝ լիարժեք տնկիներ են ստացվում առաջին իսկ տարում: Դրանց միջին բարձրությունը կազմում է 203,6-217,2 սմ, բնի տրամագիծը՝ 23,6-25,0 մմ (աղ. 1, 2, նկ. 3, 4):

Աղյուսակ 2. Արևելյան սոսու աճի դինամիկան տարբեր գոտիների բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում և լցանյութերում*

Ամիսներ	Արարատյան հարթավայր								Դիլիջանի անտառային գոտի			
	կարմիր հրաբխային խարամ				գլաքար				կարմիր հրաբխային խարամ			
	բարձրությունը, սմ		բնի տրամագիծը, մմ		բարձրությունը, սմ		բնի տրամագիծը, մմ		բարձրությունը, սմ		բնի տրամագիծը, մմ	
	ընդհանուր	ամսական	ընդհանուր	ամսական	ընդհանուր	ամսական	ընդհանուր	ամսական	ընդհանուր	ամսական	ընդհանուր	ամսական
Մայիս	72,3	19,3	3,8	0,8	77,4	24,4	4,2	1,2	54,8	1,8	3,0	-
Յունիս	84,8	12,5	6,5	2,7	91,6	14,2	6,1	1,9	63,2	9,1	3,3	0,3
Հուլիս	98,9	14,1	11,0	4,5	110,3	18,7	11,2	5,1	72,3	12,9	3,6	0,3
Օգոստոս	161,7	62,8	18,9	7,9	163,3	63,0	15,0	3,8	85,2	8,9	4,2	0,6
Սեպտեմբեր	203,0	41,3	20,2	1,3	210,0	46,7	22,5	7,5	96,8	11,6	5,9	1,7
Հոկտեմբեր	215,6	12,6	25,0	4,8	217,2	7,2	23,6	1,1	104,0	7,2	6,7	0,8

*Կազմվել է հեղինակների կողմից՝ փորձարարական տվյալների հիման վրա:



Նկ. 2. Արևելյան սոսու միամյա տնկիները Դիլիջանի անտառային գոտու բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում:



Նկ. 3. Արևելյան սոսու միամյա տնկիները բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում:



Նկ. 4. Արևելյան սոսու միամյա տնկիներ՝ աճեցված Դիլիջանի անտառային գոտու (1) և Արարատյան հարթավայրի (2, 3, 4) բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում:

Եզրակացություն

Սոսու տնկիները հիդրոպոնիկ եղանակով նպատակահարմար է բազմացնել Արարատյան հարթավայրի բնակլիմայական պայմաններում: Բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում տնկիներն աճով 2,0-2,3 անգամ գերազանցում են անտառային գոտում աճեցված տնկիներին (աղ. 1, 2, Նկ. 4): Վեգետացիայի ընթացքում 1 մ² մակերեսի հաշվով սոսու սերմնաբույսերից հնարավոր է ստանալ զարգացած արմատային համակարգով 18-19 տնկի:

Սոսու տնկիների հիդրոպոնիկ արտադրության կենսատեխնոլոգիան արդյունավետ է և հեռանկարային: Առաջարկվում է այն կիրառել արևելյան սոսու տնկիների արագացված, մեծաքանակ արտադրություն կազմակերպելու համար:

Գրականություն

1. Հարությունյան Լ.Վ., Հարությունյան Ս.Լ. Հայաստանի դենդրոֆլորան. - Գիրք 1. - Եր., 1985. - Էջ 139-144:

2. Հարությունյան Լ.Վ., Հարությունյան Ս.Լ. Հայաստանի դենդրոֆլորան. - Գիրք 2. - Եր., 1986. - 463 էջ:
3. Հովսեփյան Ա.Յ. և ուրիշ. Սոսու տնկանյութի հիդրոպոնիկ արտադրության հնարավորությունն ու արդյունավետությունը / Ա.Յ. Հովսեփյան, Գ.Յ. Պողոսյան, Ս.Ա. Էլոյան // Ագրոգիտություն. - 2013. - N 3-4. - Էջ 208-211:
4. Վարդանյան Ժ.Յ. Ծառագիտություն. - Եր.: ՀԳԱ, 2005. - 370 էջ:
5. Григорян А.А. Ценные виды деревьев и кустарников лесов Армении. - Ер., 1973. - 230 с.
6. Давтян Г.С. Гидропоника. В кн.: Справочная книга по химизации сельского хозяйства. - М.: Колос, 1980. - С. 382-385.
7. Майрапетян С.Х. Культура эфиромасличных растений в условиях открытой гидропонии. - Ер., 1989. - 314 с.

Эффективность производства саженцев восточного платана в условиях открытой гидропонии в Армении

Х.С. Майрапетян, А.А. Овсепян, А.С. Егиазарян, А.А. Акопджанян

Институт проблем гидропонии им. Г.С. Давтяна, НАН РА

Ключевые слова: платан, посадочный материал, гидропоника, питательный раствор, эффективность

Аннотация. Многолетние эксперименты проводились в гидропонической экспериментальной станции Института проблем гидропонии им. Г.С. Давтяна (Арагатская долина) и в гидропонических деланках лесной зоны Дилижана. Была разработана биотехнология производства беспочвенного выращивания саженцев восточного платана.

Рост саженцев в Арагатской долине 2.0-2.3 раза превысил рост саженцев выращенных в лесной зоне Дилижана. Разработанная нами биотехнология гидропонического производства саженцев платана эффективна и перспективна. Предлагается использовать ее для организации ускоренного оптового производства саженцев.

Efficiency of Producing Oriental Plane Tree Saplings in Conditions of Outdoor Hydroponics in Armenia

Kh.S. Mayrapetyan, A.H. Hovsepyan, A.S. Yeghiazaryan, A.A. Hakobjanyan

G.S. Davtyan Institute of Hydroponics Problems, NAS RA

Keywords: plane tree, planting material, hydroponics, nutrient solution, efficiency

Abstract. Long-term experiments have been conducted at the testing station of G.S. Davtyan Institute of Hydroponics Problems (Ararat plain) and in hydroponic conditions of Dilijan forest belt. Soilless growing biotechnology for saplings of oriental plane tree has been developed.

Growing index of the saplings produced in Ararat plain has exceeded that of grown in Dilijan forest belt in 2.0-2.3 times. The biotechnology developed for the production of plane tree saplings in hydroponic way is rather effective and perspective. Thus, it is recommended to apply it in the fast track procedure of large-scale saplings production.

*Ընդունվել է՝ 15.03.2021 թ.
Գրախոսվել է՝ 31.03.2021 թ.*



ԱՊՐՈՂԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

AGRISCIENCE AND TECHNOLOGY

АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ

Միջազգային գիտական
պարբերական

ISSN 2579-2822



Կայքէջ՝ anau.am/scientific-journal

doi:

ՀՏԴ 632.932.95

ՖԵՐՈՄՈՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱՐՈՒՅՍԵՐԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Դ.Ա. Մկրտչյան *ք.գ.թ.*

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

mkrtyan.1951@gmail.com

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝

ֆերոմոններ,
սեռական ֆերոմոններ,
էկոլոգիա,
քույսերի պաշտպանություն,
կենսաթակարոներ

ԱՍՓՈՓԱԳԻՐ

Հոդվածում ներկայացված են ցածրամոլեկուլային կենսակարգավորիչներից սեռական ֆերոմոնների սինթեզի եղանակները և գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարում դրանց կիրառման արդյունավետությունը:

Ըստ հետազոտությունների՝ սեռական ֆերոմոնները թունավոր չեն, շրջակա միջավայրի աղտոտում չեն առաջացնում, էկոլոգիապես անվտանգ են և տնտեսապես շահավետ: Ուստի արդյունաբերական ծավալներով թողարկման դեպքում դրանք կարող են լայնորեն կիրառվել գյուղատնտեսությունում՝ անտառային, ջերմատնային և այլ տնտեսություններում:

Նախաբան

Ֆերոմոնները (գրավչանյութեր) ցնդող օրգանական միացություններ են, որոնք սինթեզվում են կենդանի օրգանիզմներում և արտազատվում շրջակա միջավայր՝ հակառակ սեռի և այլ օրգանիզմների վարքի վրա ազդելու և դրանց միջև զգայական կապ ապահովելու համար:

Երկրագնդի վրա ավելի քան 300 մլն տարի բնակություն հաստատած տարատեսակ միջատների կյանքի, կենսաձևի, վարքի, միմյանց հետ և շրջակա միջավայրում հարաբերվելու վերաբերյալ առկա են սահմանափակ տեղեկություններ:

Ֆերոմոն բառը կազմված է հունարեն երկու՝ *pherein* (տեղափոխում) և *horman* (գրգռում) բառերի համակցությամբ:

Ֆերոմոնների մոլեկուլների քիմիական կառուց-

վածքների հայտնաբերումը, դրանց սինթեզի եղանակների մշակումը, կենսաբանական ակտիվության ուսումնասիրումը և կիրառումը զարգացող գիտական ուղղություններից է (B.M. Балааян, P.M. Короткий, 1987, М. Джекобсен, 1976, К.В. Лебедева и др., 1984, Э.Р. Мыттус, Д.А. Гранат, 1983):

Ըստ ազդեցության բնույթի՝ ֆերոմոնները լինում են սեռական, ագրեգացիոն, տագնապի, հետքի, պաշտպանության, վտանգի, ագրեսիայի և այլն:

Հատկապես կարևոր ֆունկցիոնալ նշանակություն ունեն է գ միջատների կողմից արտազատվող սեռական ֆերոմոնները: Արուներին «գայթակղելու» և բեղմնավորման նպատակով կանչի ազդանշան հաղորդելու նպատակով է գ միջատների այդ հատկության հիման վրա կազմակերպվում է արուների որսը կենսաթակարոներով (նկ. 1):




Նկ. 1. Արու միջատների որսը կենսաթակարոյի կիրառմամբ:

Պայքարի նշված մեթոդը նախատեսված է միջատների բեղմնավորումը և բազմացումն առավելագույնս կանխելու համար:

Գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարում տարեցտարի ավելի լայնորեն են կիրառվում ֆերոմոնային կենսաթակարոները. որպես ազդող նյութ է օգտագործվում տվյալ վնասատու միջատի՝ սինթետիկ ճանապարհով ստացված սեռական ֆերոմոնը:

Ներկայումս բազմաթիվ երկրների գիտնականների ջանքերն ուղղված են գյուղատնտեսությանը վնաս պատճառող միջատների դեմ պայքարի էկոլոգիապես անվնաս (այդ թվում՝ մարդու և շրջակա միջավայրի համար) միացությունների սինթեզի նորագույն մեթոդներ մշակելուն:

Սեռական ֆերոմոնների հետազոտությունների ընթացքում առաջին գիտական ձեռքբերումները գրանցվել են 20-րդ դարի 50-60-ական թվականներին: 1959 թվականին Բուտենանդի ղեկավարությամբ շուրջ 10 տարվա հետազոտական աշխատանքների արդյունքում հնարավոր եղավ անջատել թթենու մետաքսագործի (*Bombyx mori*, Նկ. 2) սեռական ֆերոմոնը, կատարել նույնականացում և որոշել դրա քիմիական կառուցվածքը (Յ.Ք. Мыттыс, Д.А. Гранат, 1983): Ստացված նյութն անվանվեց բոմբիկոլ:




(10E, 12Z)-հեքսդեկա-10,12-դիեն-1-ոլ

Բոմբիկոլ ֆերոմոնի մոլեկուլի քիմիական կառուցվածքի նույնականացման համար օգտագործվել է թթենու մոտ 500 000 չբեղմնավորված էգ մետաքսագործ: Ստացված ակտիվ նյութը կազմել է չնչին քանակություն (մգ): Նույնականացումը կատարվել է ֆիզիկաքիմիական մեթոդներով:




Նկ. 2. Թթենու մետաքսագործ:



Նկ. 3. Անգույգ մետաքսագործ:

Հետագայում գիտագործնական հետաքրքրություն առաջացավ հետազոտություններում ներառել անգույգ մետաքսագործ (*Porthetra Dispar*) վնասատուին (Նկ. 3): Այն անտառների և պտղատու ծառերի հիմնական վնասատուներից է, տարածվելու դեպքում կարող է ոչնչացնել լայնածավալ մասշտաբներով անտառային զանգված (A. Butenandt, 1959):

Գիտափորձերով անջատված սեռական ֆերոմոնն անվանվեց դիսպարիոլ:



ցիս-7,8-էպօքսի-2-մեթիլօկտադեկան

Ներկայումս մտահոգիչ է աշխարհով մեկ կարտոֆիլի ցեղի (*Phthorimaea operculella* Zell, նկ. 4) և լուխի հարավամերիկյան ցեղի (*Tuta absoluta*, նկ. 5) տարածումը (T.L. Payne, J.C. Dickens, 1976, Jamaoka Ryohei et al., 1976): Վերջին տարիներին այդ վնասատուները ներթափանցել են նաև Հայաստան և զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսական մշակաբույսերին:

Հարկ է նշել, որ գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարում ֆերոմոնային կենսաթակարոնների կիրառումն արդյունավետ է, էկոլոգիապես անվտանգ և տնտեսապես շահավետ:

Չարգացած երկրներում վերջին տարիներին վնասատու միջատների դեմ պայքարում լայնորեն կիրառվում են ֆերոմոնային կենսաթակարոններ: Ընդ որում՝ դրանցում ազդեցություն գործող նյութերը հենց այդ միջատների կողմից արտազատվող և սինթեզի ճանապարհով ստացված բնական միացություններն են:



Նկ. 4. Կարտոֆիլի ցեղ:



Նկ. 5. Լուխի ցեղ:

Բույսերի պաշտպանության համակարգում տարածված է ֆերոմոնների կիրառման երեք մեթոդ.

- Ազդանշանային մեթոդ. մշտադիտարկվում է կենսաթակարոնների միջոցով կատարվող միջատների որսը:
- Արուների վակուումային մեթոդ. կենսաթակարոնների կիրառմամբ կատարվում է միջատների զանգվածային որս:
- Արուների ապակողմնորոշման մեթոդ. կանխարգելվում է միջատների սեռական բազմացումը:

Ֆերոմոնային կենսաթակարոնների կիրառման ազդանշանային մեթոդը հնարավորություն է տալիս հետևել վնասատուների թռիչքին, զարգացման (քանակի աճի) դինամիկային, որոշել դաշտերի և այգիների վարակվածության աստիճանը, ինչպես նաև քիմիական պայքարի ճիշտ ժամկետները: Մշակաբույսերի վնասատուների հայտնաբերման մշտադիտարկումը լայնորեն կիրառվում է մի շարք զարգացած երկրներում:

ԱՄՆ-ում, եվրոպական երկրներում, Ռուսաստանում վնասատուների դեմ ֆերոմոնային պայքարի մեթոդը ներդրվել է պտղատու և խաղողի այգիներում հատկապես խաղողի ողկուզակերի (*Lobesia botrana*, նկ. 6), խնձորենու (*Laspeyresia pomonella*, նկ. 7) և արևելյան (*Grapholitha molesta*, նկ. 8) պտղակերների (M. Puigmarí et al., 2015, G. Cassani et al., 1980, Morton Beroza et al., 1974, A.M. Cardé et al., 1979) դեմ ինտեգրված պայքարի րականացնելու նպատակով:

Նյութը և մեթոդները

Դեռևս 1980-ական թվականներին ՀՀ ԳԱԱ Օրգանական քիմիայի ինստիտուտի բնական չիագեցած միացությունների լաբորատորիայում ակադեմիկոս Շ.Հ. Բադալյանի ղեկավարությամբ ձեռնարկվեց և նախապատրաստվեց հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի առավել տարածված վնասատուների՝ խաղողի ողկուզակերի, խնձորենու և արևելյան պտղակերների սեռական ֆերոմոնների սինթեզի եղանակների մշակման և փորձարկման համապարփակ ծրագիր: Իսկ 1983-ին ՀՀ ԳԱԱ Օրգանական քիմիայի և ՀԽՍՀ



Նկ. 6. Խաղողի ողկուզակեր:




Նկ. 7. Խնձորենու պտղակեր:




Նկ. 8. Արևելյան պտղակեր:

գյուղատնտեսության նախարարության բույսերի պաշտպանության ինստիտուտների միջև կնքվեց սինթեզված ֆերոմոնների փորձարկման գիտատեխնիկական պայմանագիր:


Խաղողի ողկուզակների սեռական ֆերոմոնի սինթեզը կատարվել է ըստ C_7+C_5 սխեմայի՝ C_7 բաղադրամասի ((2E, 4Z)-հեպտա-2,4-դիեն-1-իլ ագետատ) սինթեզի համար որպես ելանյութ է ընտրվել բուտինդիոլը, որի հիման վրա կատարվել են հետևյալ փոխարկումները.



C_5 բաղադրամասի ((5-((տետրահիդրո-2H-պիրան-2-իլ)օքսի)պենտիլ)մագնեզիում քլորիդ) սինթեզի համար որպես ելանյութ է ընտրվել տետրահիդրոպիրանը, որը ենթարկվել է հետևյալ փոխարկումների.



Խաղողի ողկուզակների սեռական ֆերոմոնի՝ (7E, 9Z)-դոդեկա-7,9-դիեն-1-իլ ագետատի սինթեզը կատարվել է C_7 և C_5 բաղադրամասերի համակցմամբ (C_7+C_5).



Վերը նշված սխեմայով սինթեզված բույսերի մաքրությունը ստուգվել է նրբաշերտ և գազահեղուկային քրոմատոգրաֆիական մեթոդներով, իսկ քիմիական կառուցվածքները (ներառյալ երկրաչափական՝ Z-, E-իզոմերները) հաստատվել են ՄՄՌ ^1H , ^{13}C -սպեկտրաչափական մեթոդներով:

Նպատակային նյութի՝ խաղողի ողկուզակների սեռական ֆերոմոնի՝ (7E, 9Z)-դոդեկա-7,9-դիեն-1-իլ ագետատի մոլեկուլի կառուցվածքի ֆիզիկաքիմիական հաստատուններն են՝

1. t° եռմ. 140-145/15 մմ, n_D^{25} 1,4714, R_f 0,53 (հեքսան-էթեր 1:1):
2. IR , v_{max} : 3100-250, 1743, 1650, 1610, 1240, 1040, 970, 950, 730:
3. ՈւՄ, λ_{max} /մմ: 235 ($\epsilon=16750$):
4. ՄՄՌ ^1H , δ , մ.բ. (J, Հ): 0,98 (t, J=7,5 Հ g), 3H, HC (12), 1,2-1,8 (m, 8H, $4\times\text{CH}_2$), 2,02 (s, 3H, CH_3CO), 2,10-2,20 (m, 4H, HC(6) և HC(11)), 4,15 (t, J=7,0 Հ g), 2H, HC(1), 5,29 (dt, J=11,5 Հ g և 7,5 Հ g, 1H, HC(10)), 5,60 (dt, J=15,0 Հ g և 7,5 Հ g, 1H, HC(7)), 5,91 (tt, J=11,0 Հ g և 2,0 Հ g, 1H, HC(9)), 6,30 (dddt, J=15,0 Հ g, 11,0 Hz, 1,5 Հ g և 1,5 Հ g, 1H, HC(8)):

Արդյունքները և վերլուծությունը

Մեր կողմից սինթեզված խաղողի ողկուզակների ֆերոմոնի ակտիվությունը փաստելու նպատակով հարկ եմ համարել ստորև ներկայացնել ՀԽՍՀ գյուղատնտեսության նախարարության բույսերի պաշտպանության ինստիտուտի աշխատակիցների կողմից Հայաստանի և Վրաստանի որոշ վարչական շրջաններում իրականացված հետազոտությունների արդյունքները (աղ. 1-5):

Աղյուսակ 1. Նոյեմբերյանի շրջանի «Լավվարի» սովխոզում փորձանմուշների ակտիվության գնահատումը (25.04.1984-18.05.1984 թթ.):

Փորձանմուշի ծածկագիրը	Մեկ թակարդում որսված թիթեռների միջին քանակը
AH-52*	457,3
AH-53*	359,7
KMEK**	380,3

Աղյուսակ 2. Արտաշատի շրջանի Նորաշեն գյուղի Աթաբեկյանի անվան կոլտնտեսությունում փորձանմուշների ակտիվության գնահատումը (27.06.1984-12.07.1984 թթ.)

Փորձանմուշի ծածկագիրը	Մեկ թակարդում որսված թիթեռների միջին քանակը
AH-59*	121,4
AH-60*	113,8
KMEK**	116,0

Աղյուսակ 3. Արտաշատի շրջանի Այգեգարդ գյուղի Փարիզյան կոմունայի կոլտնտեսությունում փորձանմուշների ակտիվության գնահատումը (04.08.1984-04.09.1984 թթ.)

Փորձանմուշի ծածկագիրը	Մեկ թակարդում որսված թիթեռների միջին քանակը
AH-59*	1632,0
AH-60*	1546,0
KMEK**	1405,0

Աղյուսակ 4. Վրաստանի Գուրդջանի շրջանի Վեդփինի գյուղում փորձանմուշների ակտիվության գնահատումը (1985 թ.)

Փորձանմուշի ծածկագիրը	Մեկ թակարդում որսված թիթեռների միջին քանակը
Երևանյան փորձանմուշ	209,0
KMEK**	212,0

Աղյուսակ 5. Մցխեթի շրջանի Վաշլաղձվարա գյուղում գտնվող այգեգործության, խաղողագործության գիտահետազոտական փորձարարական բազայում փորձանմուշների ակտիվության գնահատումը (1985 թ.)

Փորձանմուշի ծածկագիրը	Մեկ թակարդում որսված թիթեռների միջին քանակը
Երևանյան փորձանմուշ	397,0
KMEK**	388,0

* Առավել ակտիվ Երևանյան փորձանմուշ:

**Ստանդարտ փորձանմուշ:

Ըստ աղյուսակների տվյալների՝ մեր կողմից սինթեզված փորձանմուշներն ակտիվությամբ չեն գիշում միջազգային ստանդարտով սահմանված չափանիշներին:

Եզրակացություն

Սեռական ֆերոմոնները սինթետիկ բնական միացություններ են և, որպես գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատու միջատների դեմ պայքարի միջոց, ունեն մի շարք առավելություններ՝ թունավոր չեն, շրջակա միջավայրի աղտոտում չեն առաջացնում, Էկոլոգիապես անվտանգ են և տնտեսապես շահավետ: Միաժամանակ բնութագրվում են բարձր ընտրողականությամբ՝ ոչնչացնում են միայն միջատների վնասատու տեսակներին: Ուստի դրանց կիրառումը տարեց-տարի ընդլայնվում է:

Ֆերոմոնների՝ արդյունաբերական ծավալներով թողարկումը և դրանց լայնամասշտաբ կիրառումը կնպաստի գյուղատնտեսությունում վնասատու միջատների ոչնչացմանը և մի շարք մշակաբույսերից առավել որակյալ բերքի ստացմանը:

Գրականություն

1. Балаян В.М., Короткий Р.М. Химический язык насекомых. - М.: Агропромиздат, 1987.
2. Джекобсен М. Половые феромоны насекомых / Перевод с англ. - М.: Изд. Мир, 1976.
3. Лебедева К.В., Миняйло В.А., Пятнова Ю.Б. Феромоны насекомых. - М.: Наука, 1984.
4. Мыттус Э.Р., Гранат Д.А. Применение феромонов для защиты растений. - Таллин, 1983.
5. Butenandt, A. (1959). Ztschr. Naturforsch. C., Bd. 14, - pp. 283-285.
6. Cardé, A.M., Baker, T.C., Cardé, R.T. (1979). Journal of Chem. Ecol., - vol. 5, - N 3, - pp. 423-431.
7. Cassani, G., Massardo, P., Piccardi, P. (1980). Tetrahedron Letters, - vol. 21, N 36, - pp. 3497-3498.
8. Jamaoka Ryohei, Fukami Hiroshi, Ishii Shoziro. (1976). Agr. and Biol. Chem., - vol. 40, - N 10, - pp. 1971-1977.
9. Morton Beroza, Barbara, A., Bierl, H.R. (1974). Moffitt. Science, - vol. 183, - N 4120, - pp. 89-90.
10. Payne, T.L., Dickens, J.C. (1976). Journal of Insect Physiol., - vol. 22, - N 12, - pp. 1569-1572.
11. Puigmartí, M., Bosch, P., Guerrero, A. (2015). Synthesis 47(07), - pp. 961-968.

Применение феромонов в борьбе против вредителей сельскохозяйственных культур

Д.А. Мкртчян

Национальный аграрный университет Армении

Ключевые слова: феромоны, половые феромоны, экология, защита растений, защита растений, биоловушки

Аннотация. В статье представлены способы синтеза половых гормонов из низкомолекулярных биорегуляторов и эффективность их использования в борьбе с вредителями сельскохозяйственных посевов.

Согласно исследованиям, половые гормоны не ядовиты, не вызывают загрязнения окружающей среды, экологически безопасны и экономически выгодны. Следовательно, при производстве в промышленных масштабах их можно использовать в сельском хозяйстве - в лесных, тепличных и других хозяйствах.

Application of Pheromones in Combating Agricultural Crop Pests

D.A. Mkrtchyan

Armenian National Agrarian University

Keywords: *pheromones, sex pheromones, ecology, plant protection, bio traps*

Abstract. The article discusses synthesis method of sex pheromones as low-molecular weight bio-regulators, as well as their application efficiency in combating pests of the agricultural crops.

According to the conducted investigations, the sex pheromones are non-toxic, do not cause any environmental pollution; they are also ecologically safe and economically efficient. Hence, in case of industrial production they can be widely used in agriculture - forestry, greenhouse and other farms.

Ընդունվել է՝ 13.07.2021 թ.
Գրախոսվել է՝ 19.09.2021 թ.



ԱՊՐՈՂԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
Հայաստանի ազգային ագրարային համալսարան
AGRICULTURE AND TECHNOLOGY АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ

Միջազգային գիտական
պարբերական

ISSN 2579-2822



Կայքէջ՝ anau.am/scientific-journal

doi:

ՀՏԴ 636.22/28.033

ՄՍԱՅԻՆ ՈՒՂՐՈՒԹՅԱՆ ՏԱՎԱՐԻ ՄԹԵՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՍՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

Ա.Վ. Ազիզյան *գ.գ.թ.*

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

Ա.Մ. Պողոսյան

«Մաունթեյն Բիֆ Զոմփանի» ՍՊԸ

arevik.azizyan.72@mail.ru, ashotboghossian@gmail.com

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝

ցեղ,
հատկանիշ,
սնվածություն,
կերակրում,
պահվածք

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Նախրի սնվածության գնահատումն ըստ ստանդարտի հնարավորություն է տալիս վերահսկել կենդանիների ընդհանուր վիճակը և դրանց օրգանիզմում պահուստային նյութերի կուտակումը: Սնվածությունը գնահատվում է 1-10 բալային համակարգով: Ըստ տարվա եղանակի և ֆիզիոլոգիական վիճակի՝ նախրի կովերի միջին սնվածությունը գնահատվում է 5-7 բալ, իսկ հյուծվածությունն ու գերսնվածությունը՝ համապատասխանաբար 3 և 8 բալ: Նշված բալային համակարգը կիրառվում է մսային ուղղության տավարի տարբեր ցեղերի և դրանց խառնածինների մսային մթերատվության գնահատման նպատակով:

Ուսումնասիրությունները շարունակվում են: Արդյունքները կներկայացվեն առաջիկա հոդվածներում:

Նախաբան

Հայաստանում տավարաբուծությունն անասնաբուծության հիմնական ճյուղն է: Անասնաբուծական մթերքի արտադրությունում տավարաբուծական մթերքը կազմում է ավելի քան 70 %, իսկ արտադրվող մսի 64,4 %-ը ստացվում է տավարաբուծությունից: Հանրապետությունում բուծվող տավարի ընդհանուր գլխաքանակի ավելի քան 90 %-ը կովկասյան գորշ ցեղի ցածր մթերատվությամբ կենդանիներ են: Ուստի մսային մթերատվության բարձրացման տեսանկյունից գերակա խնդիր է մասնագիտացված բարձրմթերատու ցեղի կենդանիների գլխաքանակի ավելացումը (Վ.Լ. Վլադիմիրով, 1989):

Հայաստանում տավարի մսի տարեկան պահանջարկը կազմում է մոտ 60,000 տ, որից ներկրվում է առնվազն 10,000-12,000 տ: Հանրապետությունում մսային ուղղության տավարի մասնագիտացված ցեղեր քիչ են բուծվում: Տավարի միսը հիմնականում ստացվում է կովկասյան գորշ ցեղի կենդանիներից, որոնց 25-30 %-ը կազմում են խոտանված լիատարիք կովերը և ցուլերը, իսկ 70-75 %-ը՝ նախրի վերարտադրության համար ոչ պիտանի մատղաշը: Սպանդային ելունքը կազմում է 52-55 %, մեկ կգ քաշաճի հաշվով ծախսվում է 7,6 կերամիավոր (Խ.Մ. Սիմոնյան, 2004):

ԱՄՆ-ում, Կանադայում, Բելգիայում և այլ զարգացած

երկրներում բուծվում են տավարի մասնագիտացված մսային ուղղության ցեղեր (հերեֆորդ, շորթհորն, աբերդին-անգուս, շարոլե, լիմուզին և այլն), որոնք ունեն կայուն ժառանգական հատկանիշներ:

Նշված երկրներում ամբողջ տարվա ընթացքում կենդանիներն արոտավայրում պահվում են ազատ: Մորթից առաջ դրանց մսային մթերատվությունը գնահատվում է սնվածության բալային համակարգով, այն է՝ որոշակի մարմնամասերի զննում, շոշափում և ակնադիտական եղանակով գնահատում: Մարմնամասերի մշակված ձևաբանական և որակական ցուցանիշների հիման վրա Նախրի միս արտադրող հիմնական միավորների (մայր կովերի) սնվածության մակարդակի բալային գնահատումն ապահովում է տնտեսության արդյունավետությունը և, ամենակարևորը՝ մսի որակը (Խ.Մ. Սիմոնյան, 2012, <https://www1.agric.gov.ab.ca>):

Նյութ և մեթոդները

Հայաստանի որոշ շրջաններում արոտավայրերը թույլ են տալիս մսային ուղղության ցեղեր աճեցնել առանց հավելյալ կերի, ինչը կրճատում է կերակրման և պահվածքի ծախսերը: Ամառային արոտավայրերի լեռնային լանդշաֆտի բազմազանության շնորհիվ հնարավոր է լինում կենդանիներին լեռնային բարձրորակ կանաչով ապահովել տարվա 10 և ավելի (երբեմն 11) ամիսներին: Բնակլիմայական պայմաններով ստեղծվում է ձմեռային արածեցման հնարավորություն, ինչը նվազեցնում է կերի պահեստավորման և անասնագոմեքում կերակրում կազմակերպելու ծախսերը: Լեռնային բազմաթիվ գետակների և առվակների առկայությամբ նաև կրճատվում են կենդանիներին ջրով ապահովելու ծախսերը (Խ.Մ. Սիմոնյան, 2012):

2020 թ. հունվարին ՌԴ Լենինգրադի մարզի Վիբորգսկի շրջանի Լոսկո գյուղում գտնվող «Լոսկո» ԲԲԸ գյուղացիական տնտեսությունից ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի տարածաշրջանի Գոշ գյուղ են ներկրվել մաքրացել աբերդին-անգուս ցեղի 30 գլուխ երինջ և 2 գլուխ ցուլ:

Տավուշի մարզը հարուստ է օրգանական գյուղատնտեսության համար նպաստավոր պայմաններով: Կլիման չափավոր տաք է՝ չոր մերձարևադարձայինից (շոգ ամառ, մեղմ ձմեռ) մինչև բարեխառն (մեղմ ամառ): Ըստ ծովի մակերևույթից բարձրության՝ հերթափոխվում են լեռնատափաստանային, լեռնաանտառային և մերձալպյան լանդշաֆտային գոտիները: Տարածքի 51 %-ը զբաղեցնում են անտառները: Նոսրանտառային և լեռների գագաթնային գոտիները հարուստ են ալպյան բուսականությամբ:

Աբերդին-անգուս ցեղի կենդանիները լավ են հարմարված ինչպես չափավոր շոգ, այնպես էլ ցուրտ կլիմայական պայմաններին: Դրանք պահվում են ազատ՝ «Էկետրական հովվի» օգնությամբ հսկվող տարածքում: Միս արտադրող հիմնական միավորը մայր կովն է: Այն տարեկան տալիս է մեկ (հազվադեպ՝ երկու)

հորթ: Հորթերն աճեցվում են մինչև 18 ամսականը, ապա իրացվում: Մայրական գլխաքանակը պարբերաբար թարմացվում է: Մայրերին ծնելու և հորթերին խնամելու օգնություն չի տրամադրվում: Հորթերը «մոր տակ» պահվում են մինչև 6-8 ամսականը. պահվածքը և աճեցմունքը պարզ են (Խ.Մ. Սիմոնյան, 2012):

Մսային ուղղության տավարը դիմացկուն է, օրգանիզմում պահուստային նյութերի կուտակման շնորհիվ կարողանում է ոչ բարենպաստ պայմաններում դիմանալ՝ սնվածությունը չկորցնելով (եթե մինչ այդ վերջինիս մակարդակը եղել է բարձր): Կաթնային ուղղության կովերի մոտ սնվածությունը միշտ 0,5 բալով ցածր է պահանջվող ստանդարտից: Ընդ որում՝ 4 բալը նվազագույն չեմն է: Նախրի սնվածության գնահատումն ըստ ստանդարտի հնարավորություն է տալիս վերահսկել կենդանիների ընդհանուր վիճակը և դրանց օրգանիզմում պահուստային նյութերի կուտակումը (<https://beeflambnz.com>):

Սնվածությունը գնահատվում է 1-10 բալային համակարգով: Ըստ տարվա եղանակի և ֆիզիոլոգիական վիճակի՝ Նախրի կովերի միջին սնվածությունը գնահատվում է 5-7 բալ, իսկ հյուծվածությունն ու գերսնվածությունը՝ համապատասխանաբար 3 և 8 բալ:

Նշված բալային համակարգը կիրառվում է մսային ուղղության տավարի տարբեր ցեղերի և դրանց խառնածինների մսային մթերատվության գնահատման նպատակով (<https://www1.agric.gov.ab.ca>, <https://beeflambnz.com>):

Արդյունքները և վերլուծությունը

Կենդանի զանգվածի գնահատման համեմատությամբ սնվածության գնահատումը գործնականորեն Նախընտրելի է: Առաջին հերթին այն մարմնի վիճակի ավելի ճիշտ գնահատումն է որոշակի ժամանակահատվածի հաշվարկով և կախված չէ հողիության ժամկետից, պտղի չափերից ու զանգվածից: Մսային ուղղության տավարի աճը տևում է մինչև 6 տարեկանը. կենդանի զանգվածն ավելանում է, իսկ սնվածությունը՝ ոչ:

Ի տարբերություն կենդանի զանգվածի՝ սնվածությունը հնարավոր է գնահատել հեռվից՝ ակնադիտական եղանակով: Բարձրադաս նիհար և ցածրադաս լեցուն կովերը կարող են ունենալ միևնույն կենդանի զանգվածը (<https://futurebeef.com.au>):

Հետազոտությունների համաձայն՝ 520 կգ լիատարիք կովերի սնվածությունը գնահատվում է 4-8 բալ՝ 30 կգ կենդանի զանգվածի հաշվով 1 բալ (<https://beeflambnz.com>):

Ծնից մինչև զուգավորում ընկած ժամանակահատվածում (սերվիսի շրջան) մսային ուղղության տավարի սնվածության բարձրացումը նպաստում է հորթերի աճն ապահովելու համար անհրաժեշտ քանակությամբ կաթնատվությանը և բեղմնավորմանը: Այդ ժամանա-

կահատվածում պետք բարձրացնել կովերի կերակրման մակարդակը՝ ապահովելով 6 բալից ոչ պակաս սնվածություն: Առատ կերակրման դեպքում հնարավոր է օրական ստանալ միջինը 1 կգ քաշաճ: Յուրաքանչյուր մեկ բալի դեպքում միջին օրական քաշաճը կազմում է 0,4 կգ: Եթե կովերի սնվածությունը չի հասնում 6 բալի, ապա զուգավորումը հետաձգվում է, նվազում է կաթնատվությունը, ինչի հետևանքով դանդաղում է հորթերի աճը (<https://beeflambnz.com>):

Կաթի դադարի (ցամաքի) շրջանն արոտային պահվածքի դեպքում համընկնում է ձմեռային շրջանին: Այդ ժամանակահատվածում սնվածությունը պայմանավորված է ամառային արոտի շրջանով և պետք է կազմի 6-8 բալ: 7 բալ սնվածությամբ կենդանիները կաթի դադարի շրջանում կորցնում են ընդամենը 2 բալ: 4 բալ և պակաս սնվածությամբ կենդանիներին անհրաժեշտ է լրացուցիչ կերակրել, որպեսզի ծնի պահին դրանց սնվածությունը կազմի 5 բալ: Բացի այդ՝ բարձր սնվածությամբ կենդանիները դիմանում են խստաշունչ ձմռանը: Անհրաժեշտ է գնահատել յուրաքանչյուր կովի սնվածությունը, այլ ոչ թե նախրի սնվածության միջին մակարդակը:

Սնվածության նպատակային գնահատման կորագիծը ներկայացված է նկար 1-ում:

Անհրաժեշտ է սնվածության նպատակային գնահատումը կատարել որոշակի ժամանակահատվածներում (<https://beeflambnz.com>).

Կաթի դադարի շրջանում սնվածությունը գնահատվում


է աշնանը՝ ձմռան ամիսներին կենդանիների դիմացկունությունը և կերի պաշարը որոշելու նպատակով:

Ձմեռային շրջանում սնվածության գնահատումը հնարավորություն է տալիս վերահսկել սնվածության կորուստը և կազմակերպել 4 բալ սնվածությամբ կովերի լրացուցիչ կերակրում:


Ծնից երկու ամիս առաջ կատարվող գնահատումը սնվածության բարձրացման վերջին հնարավորությունն է:

Ծնից մինչև զուգավորումն անհրաժեշտ է վերահսկել սնվածությունը՝ զուգավորման պահին 6 բալ սնվածություն ապահովելու համար: Նախընտրելի է, որ աշնանային շրջանում մայրական կազմի սնվածությունը կազմի 7 բալ, քանի որ մինչև ծնի ընկած ժամանակահատվածում 2 բալ կորստի դեպքում հնարավոր է խուսափել լրացուցիչ կերակրման ծախսերից: 560 կգ կենդանի զանգվածով և 7 բալ սնվածությամբ կովը 19 %-ով քիչ էներգիա է ծախսում, քան նույն զանգվածով, բայց 7 բալից ցածր սնվածությամբ կովը: Ձմռան ժամանակահատվածի համար 19 %-ով քիչ էներգիայի ծախսը (9 ՄՋ/կգ) համարժեք է 12 հալ (16 կգ-անոց) խոտին (<https://beeflambnz.com>):

Վերջինիայի պետական համալսարանի աշխատակիցների հետազոտությունների համաձայն՝ ծնից մինչև զուգավորումն ընկած ժամանակահատվածում կենդանիների սնվածությամբ են պայմանավորված հասուն ձվաբջիջ արտադրությունը և արդյունավետ բեղմնավորումը (նկ. 2):



Նկ. 1. Սնվածության նպատակային գնահատման կորագիծը (<https://beeflambnz.com>):



Նկ. 2. Սնվածությամբ պայմանավորված արդյունավետ բեղմնավորման ապահովումը (<https://vtechworks.lib.vt.edu>):

Ծնից մինչև զուգավորումն ընկած ժամանակահատվածում սնվածության վերահսկողությունը կնպաստի նախրում հղի կովերի գլխաքանակի ավելացմանը և հորթատվության մակարդակի բարձրացմանը (<https://vtechworks.lib.vt.edu>):

Եզրակացություն

Ըստ հետազոտությունների՝ կենդանի զանգվածի գնահատման 4-8 բալ սնվածության դեպքում մեկ բալը համապատասխանում է մոտ 30 կգ կենդանի զանգվածին: Անհրաժեշտ է որոշակի ժամանակահատվածներում կատարել սնվածության նպատակային գնահատում:

Մինչև ծինն ընկած ժամանակահատվածում մայրական կազմի սնվածության 2 բալ կորստի դեպքում լրացուցիչ կերակրման ծախսերից խուսափելու համար անհրաժեշտ է աշնանը դրանց սնվածությունը հասցնել 7 բալի: 560 կգ կենդանի զանգվածով և 7 բալ սնվածությամբ կովը 19 %-ով քիչ էներգիա է ծախսում (9 ՄՋ/կգ), քան նույն զանգվածով, բայց 7 բալից ցածր սնվածությամբ կովը:

Ներկայացված բալային համակարգը կիրառվում է մայրին ուղղության տավարի տարբեր ցեղերի և դրանց խառնածինների մայրին մթերատվության գնահատման նպատակով:

Գրականություն

1. Սիմոնյան Խ.Մ. Հայաստանում բուծվող տավարի ցեղերը և նրանց բարելավման ուղիները. - Եր., 2004. - 558 էջ:
2. Սիմոնյան Խ.Մ., Սիմոնյան Ա.Խ. Տավարի պահվածքի տեխնոլոգիան. - Եր., 2012. - 125 էջ:
3. Վլադիմիրով Վ.Լ. Անասնաբուժական մթերքների արտադրության ինտենսիվացման հիմունքներ / Թարգ. Վ.Բ. Ոսկանյանի. - Եր., 1989. - 235 էջ:
4. <https://beeflambnz.com/knowledge-hub/PDF/beef-cow-body-condition-scoring> Beef Cow Body Condition Scoring (դիտվել է 2020 թ. օգոստոսին).
5. <https://futurebeef.com.au/knowledge-centre/body-condition-score-for-beef-cattle/> Body Condition Score For Beef Cattle (դիտվել է 2020 թ. օգոստոսին).
6. <https://vtechworks.lib.vt.edu/bitstream/handle/10919/74359/Body%20Condition%20Scoring%20Beef%20Cows.pdf?sequence=1> Body Condition Scoring Beef Cows (դիտվել է 2020 թ. օգոստոսին).
7. [https://www1.agric.gov.ab.ca/\\$department/deptdocs.nsf/all/agdex9622/\\$FILE/bcs-beef-cow.pdf](https://www1.agric.gov.ab.ca/$department/deptdocs.nsf/all/agdex9622/$FILE/bcs-beef-cow.pdf) What's the Score: Beef Cow Body Condition Scoring (BCS) Guide (դիտվել է 2020 թ. օգոստոսին).

Оценка продуктивности мясного скота по балльной системе упитанности

А.В. Азизян

Национальный аграрный университет Армении

А.М. Погосян

ООО "Маунтен Биф Компани"

Ключевые слова: *порода, признак, упитанность, кормление, содержание*

Аннотация. Оценка упитанности стада по стандарту дает возможность контролировать общее состояние животных и накопление в их организме резервных веществ. Упитанность оценивается по шкале от 1 до 10 баллов. В зависимости от сезона и физиологического состояния, средняя упитанность коров стада оценивается 5-7 баллов, а истощение и ожирение - соответственно 3 и 8 баллов. Отмеченная балльная система применяется с целью оценки мясной продуктивности различных пород мясных коров и их помесей.

Исследования продолжаются. Результаты будут представлены в следующих статьях.

Estimation of Beef Cattle Productivity per Body Condition Scoring System

A.V. Azizyan

Armenian National Agrarian University

A.M. Poghosyan

"Mountain Beef Company", LLC

Keywords: *breed, feature, body condition, feeding, keeping*

Abstract. Estimation of the cattle's body condition per the standard enables to control the general state of the animals and storage of the reserve substances in their bodies. The body condition is rated through 1-10 scoring scale system. According to the weather conditions and physiological state, the average body condition of the herd's cows is estimated as 5-7 points, while emaciation and overfeeding - 3-8 points accordingly. The mentioned scoring system is applied for the productivity estimation in different breeds of beef cattle and their crossbreeds.

The studies are still in process and the findings will be published in the upcoming articles.

*Ընդունվել է՝ 11.05.2021 թ.
Գրախոսվել է՝ 08.09.2021 թ.*



ՀՏԴ 636.5:[619: 616.381-003.217]

ՀԱՎԵՐԻ ԱՍՑԻՏԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԲՈՒԺՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ**Վ.Մ. Շախսուվարյան, Կ.Ա. Սուքիասյան ա.գ.թ., Է.Ա. Նիկողոսյան ա.գ.թ., Մ.Է. Ամիրխանյան***Հայաստանի ազգային ագրարային համալսարան*vahagnshakh@gmail.com, karinesukiasyan58@gmail.com, erik-nik69@yandex.ru, meri.amirxanyan@bk.ru**Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն****Բանալի բառեր՝***ասցիտ,
բրոյլեր,
սթրես,
պոլիցիտեմիա,
հիպոքսիա,
Տերմովետ,
Biotronic***Ա Ս Փ Ո Փ Ա Գ Ի Ր**

Բրոյլերների ասցիտի բուժման և կանխարգելման արդյունավետ եղանակ մշակելու նպատակով հետազոտություններն իրականացվել են 2019-2020 թվականներին: Հետազոտության է ենթարկվել 500 գլուխ 4-5 շաբաթական բրոյլեր:

Ասցիտով հիվանդ բրոյլերների մի խմբին տրվել է Biotronic Top, մյուս խմբին՝ մեր կողմից առաջարկվող Տերմովետ պատրաստուկը: Միաժամանակ կիրառվել են հիվանդության կանխարգելման հիմնական սխեմայով նախատեսված դեղամիջոցներ: Կատարվել են արյունաբանական հետազոտություններ: Երկրորդ խմբում կլինիկական ցուցանիշները կարգավորվել են ավելի արագ, ինչը փաստում է Տերմովետ պատրաստուկի բուժկանխարգելիչ բարձր արդյունավետության մասին:

Նախաբան

Հայաստանի թռչնաբուժական տնտեսություններում թռչունների ոչ վարակիչ հիվանդություններից տարածված է հատկապես ասցիտը, որը պատճառում է տնտեսական մեծ վնաս՝ առաջացնելով բրոյլերների գլխաքանակի զգալի անկումներ: Սովորաբար ասցիտը ախտորոշվում է 4-5 շաբաթական թռչունների մոտ (H.W. Yoder, 1992, R.J. Julian & B. Wilson, 1992, H.W. Yoder, 1996):

Ասցիտի համախտանիշի հետևանքով անկումների մակարդակն ավելի բարձր է աքաղաղների մոտ, ինչը պայմանավորված է դրանց աճի արագ տեմպերով և մեծ մկանային զանգվածով:

Բրոյլերների մոտ ասցիտի առաջացմանը նպաստում են անոթային ցածր կոլոիդային օսմոտիկ ճնշումը,

թռչնանոցների ոչ բավարար օդափոխությունը: Ընդ որում, թռչնանոցների գերծանրաբեռնվածությամբ պայմանավորված, օդում թթվածնի ոչ բավարար քանակության հետևանքով թռչունների օրգանիզմում բարձրանում է ամոնիակի կոնցենտրացիան, թոքերն ախտահարվում են, և առաջանում է հիպոքսիա:

Թռչնանոցների գերծանրաբեռնվածությունը, բարձր կամ ցածր ջերմաստիճանային պայմանները, գլխաքանակի տեղափոխությունը նպաստում են նաև սթրեսի առաջացմանը: Վերջինիս հետևանքով բարձրանում է արյան ճնշումը, արագանում է անոթազարկի հաճախականությունը, և ախտահարվում են արյունատար անոթները: Բարձրադիր վայրերում թռչունների մոտ առաջանում է երկրորդային պոլիցիտեմիա, որի ժամանակ արյունը խտանում է՝ հանգեցնելով արյան շրջանառության դանդաղեցման և հիպոքսիայի:

Ասցիտի հետևանքով, ինչպես նաև շրջակա միջավայրի ազդեցությամբ, գենետիկայով, կերակրմամբ պայմանավորված՝ թռչունների օրգանիզմում տեղի են ունենում զգալի ֆիզիոլոգիական փոփոխություններ, այդ թվում՝ նյութափոխանակության խանգարումներ, որոնք նպաստում են որովայնի խոռոչում հեղուկի կուտակմանը (R.J. Julian, 1991)։

Ասցիտի բուժման եղանակները դեռևս վերջնականորեն մշակված չեն։ Ուստի խնդիր է դրվել մշակել բրոյլեր հավերի ասցիտի բուժման և կանխարգելման արդյունավետ եղանակներ, որոնք կնպաստեն գլխաքանակի պահպանմանը, ասցիտի վերացմանը և կանխարգելմանը (R.J. Julian, J. Summers & J.B. Wilson, 1986, R.J. Julian, G.W. Friars, H. French & M. Quinton 1987)։

Հարկ է նշել, որ թռչնաբուժական տնտեսություններում ասցիտի համախտանիշի արագ զարգացումը հանգեցնում է գլխաքանակի զանգվածային անկումների և պատճառում տնտեսական մեծ վնաս։ Ասցիտի համախտանիշով հիվանդ թռչնի միսը չի թույլատրվում օգտագործել որպես սննդամթերք։

Նյութը և մեթոդները

Հետազոտությունները կատարվել են 2019-2020 թվականներին։ Արագածոտնի մարզի «Շիրառ» ՍՊԸ թռչնաֆաբրիկայում հետազոտության է ենթարկվել 500 գլուխ 4-5 շաբաթական բրոյլեր։ Թռչունները պահվել են վանդակներում և ընտրվել համանմանության կարգով։ Հիվանդությունն ախտորոշվել է կլինիկական և լաբորատոր ցուցանիշների հիման վրա։ Արյունաբանական հետազոտությունները կատարվել են մարզային անասնաբուժական լաբորատորիայում։ Թևի երակից նմուշառված արյան մեջ որոշվել են էրիթրոցիտների, լեյկոցիտների, հեմոգլոբինի, հեմատոկրիտի քանակությունը, էրիթրոցիտների նստեցման արագությունը (ԷՆԱ)։ Տնտեսությունում մեկ օրականից մինչև 4-5 շաբաթական բրոյլերների մոտ հիվանդության կանխարգելման նպատակով իրականացվել են բուժկանխարգելիչ միջոցառումներ (աղ. 1)։

Առանձնացվել է ասցիտով հիվանդ 4-5 շաբաթական բրոյլեր հավերի երկու խումբ։ 1-ին խմբին տրվել է Biotronic Top պատրաստուկը (1000 լ կերի հաշվով 1,50 լ), 2-րդ խմբին՝ մեր կողմից առաջարկված Տերմովետ պատրաստուկը (1 կգ կենդանի զանգվածի հաշվով 0,07 գ)։

Biotronic® արտադրատեսակները ներառում են օրգանական թթուների, դրանց աղերի, ֆիտոքեմիական նյութերի և նոր թափանցելիությամբ բաղադրիչ Biomin® permeabilizing Complex-ի հատուկ մշակված խառնուրդներ, որոնք մեծացնում են բջջաթաղանթի թափանցելիությունը և բարձրացնում սիներգիական ազդեցության արդյունավետությունը։ Biomin® permeabilizing Complex-ն ակտիվացնում է օրգանական թթուների ու

ֆիտոքեմիական բաղադրիչների գործունեությունը և հեշտացնում դրանց ներթափանցումը բջջի մեջ։

Biotronic® Top-ն օրգանական թթուների և թափանցելի նյութի համադրությամբ ջրալույծ հեղուկ է, որը կարող է կիրառվել խմելու ջրի, կերի և կաթի հետ։

Օրգանական թթուները կարգավորում են ջրի և կերի հիդրեսան՝ նվազեցնելով pH-ը և բուֆերայնությունը։ Բացի այդ՝ գործում են հակամանրէական ազդեցություն (գրամ-բացասական մանրէների, այդ թվում՝ *Salmonella*-ի և *E. coli*-ի նկատմամբ)։ Permeabilizing նյութը թուլացնում է գրամ-բացասական մանրէների արտաքին բջջաթաղանթը՝ դրանով իսկ բարձրացնելով օրգանական թթուների հակամանրէական ազդեցությունը։

Խմելու ջրի հիդրեսայի բարելավման նպատակով 1000 լ ջրի հաշվով ավելացվում է 0,06-1,80 լ Biotronic (ըստ pH-ի և ջրի կարծրության)։

Տերմովետը ջրալույծ փոշի է, որը թռչունների, խոզերի և մատղաշ կենդանիների բորբոքային և ցավային ախտանիշների, շնչառական և ստամոքսաաղիքային հիվանդությունների, ջերմային սթրեսով, մկանների և հետվիրահատական ցավերով ուղեկցվող ախտաբանական երևույթների ժամանակ կիրառվում է որպես ցավազրկող, հակաբորբոքային և ջերմիջեցնող միջոց։ Տերմովետի բաղադրիչ ացետիլսալիցիլաթթուն հակաբորբոքային, հակասեպտիկ, անալգետիկ ազդեցության շնորհիվ կանխում է թրոմբոզը։

Հակաբորբոքային և ցավազրկող (անալգետիկ) ազդեցությունները պայմանավորված են բրադիկինինի և պրոստագլանդինների թույլ սինթեզով, ինչպես նաև պերիֆերիկ նյարդային համակարգի ցավի ռեցեպտորների վրա ներգործությամբ, իսկ ջերմիջեցնող ազդեցությունը՝ Էնդոգեն պիրոգենի (ինտերլեյկին-1) լեյկոցիտների արտադրությամբ և ջերմատվության բարձրացմամբ։

Ացետիլսալիցիլաթթվի հակաադրեգատային ազդեցություն տեղի է ունենում արախիդոնիկ թթվի փոխանակային պրոցեսների արգելափակմամբ, ինչն ակտիվացնում է պրոստագլանդինի սինթեզը, կանխում թրոմբոցիտների ագրեգացումը և թրոմբոզը։

Տերմովետը թռչուններին տրվում է խմելու ջրի հետ՝ 3-5 օր, հետևյալ չափաքանակներով՝ 0,07 գ / 1 կգ կենդանի զանգվածի (50 մգ ացետիլսալիցիլաթթու / 1 կգ կենդանի զանգվածի) կամ 250-550 գ / 1 տ ջրի հաշվով։ Դեղամիջոցի կիրառումից հետո ացետիլսալիցիլաթթուն արագորեն ներծծվում է ստամոքսաաղիքային համակարգում և ներթափանցում օրգաններ ու հյուսվածքներ։ Այն մասնակցում է լյարդում ընթացող նյութափոխանակության պրոցեսներին՝ առաջացնելով սալիցիլուրաթթու, սալիցիլ-գլյուկուրոնիդ և գենտիսիկ թթու։ Արտազատվում է հիմնականում մեզի միջոցով։

Աղյուսակ 1. Բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման սխեման*

Բրոյլերներ, օրական	Բուժկանխարգելիչ միջոցառումներ		Չափաքանակը, 1 տ ջրի հաշվով	Մեթոդը
	տեսակը	անվանումը		
0	Պատվաստանյութ	Ibird + VitobronL/ Broiler NDK		Սփրեյ/ ներարկում
1	Հակաբորբոքային դեղորայք	Էնրոֆլուկսացին+Կոլիստին	0,5 լ	համելու ջրի հետ
2	Հակաբորբոքային դեղորայք	Էնրոֆլուկսացին+Կոլիստին	0,5 լ	համելու ջրի հետ
3	Հակաբորբոքային դեղորայք	Էնրոֆլուկսացին+Կոլիստին	0,5 լ	համելու ջրի հետ
4	Հակաբորբոքային դեղորայք	Տիլոզին տարտրատ	0,5 լ	համելու ջրի հետ
5	Հակաբորբոքային դեղորայք	Տիլոզին տարտրատ	0,5 լ	համելու ջրի հետ
6	Հակաբորբոքային դեղորայք	Տիլոզին տարտրատ	0,5 լ	համելու ջրի հետ
7	Վիտամին	Վիտամին C	0,5 լ	համելու ջրի հետ
8	Վիտամին	Վիտամին C	0,5 լ	համելու ջրի հետ
9	Պատվաստանյութ	MassL (ԻԲ) կամ (Ma5/Ibird) + + NewL (ՆՀ)		Սփրեյ
	Կոկցիդիոստատիկ	Ամպրոլիում	125 գ	համելու ջրի հետ
10	Կոկցիդիոստատիկ	Ամպրոլիում	125 գ	համելու ջրի հետ
11	Պատվաստանյութ	IBDL (ԻԲՀ)		համելու ջրի հետ
	Կոկցիդիոստատիկ	Ամպրոլիում	125 գ	համելու ջրի հետ
12	Կոկցիդիոստատիկ	Ամպրոլիում	125 գ	համելու ջրի հետ
13	Վիտամին	Վիտամին C	0,5 լ	համելու ջրի հետ
14	Պատվաստանյութ	IBDL (ԻԲՀ)		համելու ջրի հետ
15	Վիտամինային խառնուրդ	Vitamins Lamons Plus	0,25 լ	համելու ջրի հետ
16	Պատվաստանյութ	Ibird (ՀԻԲ)		Սփրեյ
	Վիտամինային խառնուրդ	Vitamins Lamons Plus	0,25 լ	համելու ջրի հետ
17	Վիտամինային խառնուրդ	Vitamins Lamons Plus	0,25 լ	համելու ջրի հետ
18	Վիտամինային խառնուրդ	Vitamins Lamons Plus	0,25 լ	համելու ջրի հետ
19	Վիտամինային խառնուրդ	Vitamins Lamons Plus	0,25 լ	համելու ջրի հետ
20	Վիտամինային խառնուրդ	Vitamins Lamons Plus	0,25 լ	համելու ջրի հետ
21	Վիտամինային խառնուրդ	Vitamins Lamons Plus	0,25 լ	համելու ջրի հետ
22	Օրգանական թթուներ	Biotronic Top	1 լ	համելու ջրի հետ
23	Օրգանական թթուներ	Biotronic Top	1 լ	համելու ջրի հետ
24	Օրգանական թթուներ	Biotronic Top	1 լ	համելու ջրի հետ
25	Օրգանական թթուներ	Biotronic Top	1 լ	համելու ջրի հետ
26	Օրգանական թթուներ	Biotronic Top	1 լ	համելու ջրի հետ
27	Օրգանական թթուներ	Biotronic Top	1 լ	համելու ջրի հետ
28	Օրգանական թթուներ	Biotronic Top	1 լ	համելու ջրի հետ
29	Օրգանական թթուներ	Biotronic Top	1 լ	համելու ջրի հետ
30	Օրգանական թթուներ	Biotronic Top	1 լ	համելու ջրի հետ
31	Օրգանական թթուներ	Biotronic Top	1 լ	համելու ջրի հետ
32	Օրգանական թթուներ	Biotronic Top	1 լ	համելու ջրի հետ

*Կազմվել է հեղինակների կողմից:

Արդյունքները և վերլուծությունը

Հետազոտությունների ընթացքում տնտեսությունում հայտնաբերված բոլոր հիվանդ թռչունների մոտ նկատվել է որովայնի ծավալի մեծացում, լարվածություն, հևոց, գրեթե անշարժություն, թուլություն, շարժումների լարվածություն, ծանր շնչառություն, կերից հրաժարում, գնդի և կատարի կապտություն: Բացահայտվել է, որ թռչնաֆաբրիկայում ասցիտի առաջացման հիմնական պատճառները ոչ բավարար օդափոխությունն է, աղաջրային հավասարակշռության խախտումը, երիկամների, սրտի աշխատանքի և լյարդի ֆունկցիայի խանգարումները:

Ըստ աղյուսակ 2-ի՝ ասցիտով հիվանդ թռչունների մարմնի ջերմաստիճանը չի փոփոխվել, անոթազարկն ու շնչառությունն արագացած են: Բուժման ընթացքում նշված ցուցանիշներն աստիճանաբար կարգավորվել են:

Եթե մինչև բուժումը թռչունների մարմնի ջերմաստիճանը $40,5^{\circ}\text{C}$ էր, անոթազարկը՝ 200 զարկ/ր, շնչառական շարժումների հաճախականությունը՝ 60, ապա ավանդական եղանակով բուժման 8-րդ օրը մարմնի ջերմաստիճանը եղել է $40,5^{\circ}\text{C}$, անոթազարկը՝ 150 զարկ/ր, շնչառական շարժումների հաճախականությունը՝ 30,

իսկ մեր կողմից առաջարկված եղանակով բուժման 8-րդ օրը գրանցվել է $40,5^{\circ}\text{C}$ մարմնի ջերմաստիճան, անոթազարկը կազմել է 120 զարկ/ր, շնչառական շարժումների հաճախականությունը՝ 15:

